Azg
Azg
11 ՅՈՒՆԻՍ 1994. ՇԱԲԱԹ # 110 (613)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Հ. Ա. Մաշտոցի անվան
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

SABCO
SABCO
OVERSEAS TRADING LTD.
LIMASSOL CENTRE,
BLOCK B, SUITE 307,
P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX. +357-5-370945
OUR BANKERS: B. E. M. O. BANK, LIMASSOL, CYPRUS; FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS; BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS; HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS
Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
կիտրոսի եւ Ռոտերդամի պահեստներից
ՃԽՎԽՈՏ, ՄԹԵՐՔ, ԽՄԻՉՔ, ԿՂԶՈՒՅՔ
ուղիղ հասցեատիրոջը՝ նավով եւ իմնաթիռով

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պավել Գրաչով. «Հայաստանն ադրում է, ես տեսա մարդկանց ժպիտները»

Ռուսաստանի պաշտպանության նախարարի այցն ավարտվեց

«Մի հարցերը, որ պետք է լուծեինք, մենք լուծել ենք», այսպես Ռուսաստանի պաշտպանության նախարար բարձրաստիճան զորավարը՝ Գրաչովը, Թբիլիսի, Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում նրան հանդիսավոր զինվորական պատիվները ցույց տալուց հետո:

Նակի գեներալ Պավել Գրաչովն ամփոփեց իր այցը Հայաստան: Ուրբաթ օրը նա մեկնեց Թբիլիսի, Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում նրան հանդիսավոր զինվորական պատիվները ցույց տալուց հետո:

Ես մեկնում եմ շատ լավ տպավորություններով, մեզ հայտարարեց գեներալ Պավել Գրաչովը: Մեր կողմից պլանավորված բոլոր ռազմական հարցերը սպացել են դրական լուծում եւ հավանության արժանացել Հայաստանի նախագահի կողմից: Ռուսաստանյան ռազմական բազաների ստեղծման հարցը եւս լուծված է, հայտնեց նախարարը: Դրանք կկազմակերպվեն մինչեւ ս. թ. օգոստոսի 1-ը եւ կտեղակայվեն Գյումրիում եւ Երեւանում, ընդգծեց նա: Հայաստանն ադրում է, ես տեսա մարդկանց ժպիտները, շարունակեց Պավել Գրաչովը: Խոսելով տպավորությունների մասին, գեներալը նշեց, որ հաճելիորեն զարմացած էր Հայաստանի ներքին զորքերի անձնակազմի՝ իր գործի նկատմամբ ունեցած վերաբերմունքով եւ կեցվածքով:

Տես # էջ 2

90 մլն դոլլարի վնաս Ղարաբաղին

ՎԱՀԱՆ ԱԳԱՅԱՆ,

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 10 ՀՈՒՆԻՍ: Թեեւ ընդհանուր առմամբ ղարաբաղյան ճակատներում հարաբերական հանգիստը պահպանվում է, այնուհանդերձ ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբից հաղորդում են, թե այսօր առավոտյան կրկին գնդակոծվել են ղարաբաղյան պաշտպանական դիրքերն Ադդամի շրջանի Շոթլանլու, Շուշաբադ, Մարտակերտի շրջանի Սեյսուլան գյուղերի եւ Մարտունու շրջանի Գետաշեն տեղամասի մերձակայքում: Ըստ ԼՂՀ ռազմական հետախուզության տվյալների, իրավիճակը հատկապես անկայուն է ծակատի այն հատվածներում, որտեղ տեղաբաշխված են ադրբեջանական սեւազգեստ կազմավորումները: Դրանք ենթարկվում են Մուսավաթ ընդդիմադիր կուսակցությանը: Մինչդեռ մարտական գործողությունների ողջ ժամանակահատվածում ադրբեջանական բանակի կողմից Լեռնային Ղարաբաղին հասցված վնասը, ամենահամեստ հաշվումներով, հասնում է 90 միլիոն ամերիկյան դոլլարի: Այս մասին տեղեկացրեց ԼՂՀ Նախարարների խորհրդի տնտեսության բաժնի վարիչ Ռազմիկ Պետրոսյանը: Ըստ նրա, միայն 1990 թ. ադրբեջանական զորքերը հրկիզել են 2104 հեկտար հացահատիկ: 1992 թ. ադրբեջանական հարձակումների հետեւանքով հացահատիկի բերքը չի հավաքվել 15 հազար հեկտար տարածքում: Նույն բախտին են արժանացել նաեւ 300 հեկտար խաղողի եւ 200 հեկտար պտղատու այգիներ: Մշտական անասնագողության եւ թալանի պատճառով գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները Ղարաբաղում զգալիորեն նվազել են: Մեծ վնաս է հասցվել նաեւ շինարարությանը, սակայն այս բնագավառում, Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումից հետո կան զգալի առաջխաղացումներ: Վերոհիշյալ հաշվարկներում հաշվի չեն առնված 1994 թ. իրադարձությունները: Ըստ որմ, Պետրոսյանի, տոկոսային հարաբերությամբ Ղարաբաղի կրած վնասը գրեթե երկու անգամ գերազանցում է պատասխան գործողությունների ընթացքում Ադրբեջանին հասցված վնասին:

ՄՈՍԿՎԱ

Միջխորհրդարանական համագործակցություն

Ստորագրվեց հայ-ռուսական պայմանագիր

ՄՈՍԿՎԱ, 10 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Հունիսի 9-ին Մոսկվայում կայացավ Հայաստանի եւ Ռուսաստանի խորհրդարանական պատվիրակությունների հանդիպումը, որը համապատասխանաբար գլխավորում էին խորհրդարանական վեհաժողովի միջնորդական առաքելությունը: Երկու կողմերն էլ համոզմունք հայտնեցին, որ այս հարցում դրական դեր կարող է խաղալ ԱՊՀ խաղաղարար ուժերի ստեղծումը:

Բարկեն Առարքցյանն ու Իվան Ռիբկինը: Հանդիպման ընթացքում, որը կայանում էր ՌԴ Պետդումայի նախագահ Ռիբկինի նախաձեռնությամբ ու հրավերով, քննարկվեցին երկու երկրների խորհրդարանների համագործակցության ամրապնդմանն առնչվող հարցեր: Հատուկ քննարկման նյութ դարձավ դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդական առաքելությունը: Հունիսի 10-ին կայացավ պատվիրակությունների երկրորդ հանդիպումը, որի ընթացքում ստորագրվեց Հայաստանի եւ Ռուսաստանի խորհրդարանների համագործակցության մասին պայմանագիր:

Մյուս կողմից, մոսկովյան աղբյուրներ հաղորդում են, թե ճանաչված բեռնախույզ Արթուր Չիլինգարովը երեկ ընտրվել է Ռուսաստանի Պետդումայի փոխնախագահ:

ՇՐՋԱՆ

Թուրքիան հողային պահանջներ չունի Հունաստանից

ԱԹԵՆՔ, 10 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ինչպես հաղորդել է «Հունաստանի ձայն» ռադիոկայանը, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեթինը հայտարարել է, որ վարչապետ Թանսու Չիլլերի խոսքերը այլափոխվել են, եւ Թուրքիան ոչ մի տարածքային պահանջ չունի Հունաստանից: Հունաստանի վարչապետ Անդրեաս Պապանդրեուն եւ արտաքին գործերի նախարար Պապուլիասը գոհունակություն են հայտնել Հիքմեթ Չեթինի պարզաբանումների առթիվ:

Միաժամանակ, ելույթ ունենալով Ստամբուլում ընթացող ՆԱՏՕ-ի արտաքին գործերի նախարարների խորհրդակցությունում, Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը հայտարարել է, որ 21-րդ դարի շեմին որոշ կազմակերպություններ բարբարոսական մեթոդներ են կիրառում հանուն իրենց շահերի, ընդգծելով, որ ՆԱՏՕ-ն պետք է միջոցներ ձեռնարկի Եւրոդայում մարդու իրավունքների խախտումները կանխելու համար:

«Թուրքիայի ձայն» ռադիոկայանի հաղորդման համաձայն, Չեթինն ընդգծել է, որ Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի մշտական կառը կայունության եւ անվտանգության գործոն է, բայց Ռուսաստանի հետ կառը չպետք է երկրորդ դրան մի ՆԱՏՕ-ի եւ մյուս երկրների փոխհարաբերությունները:

ԹՈՒՐՔԻԱ

Դեմիրել. «Խոսք անգամ չի կարող լինել Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու մասին»

ՍՏԱՄԲՈՒԼ, 10 ՀՈՒՆԻՍ, ԻՍԼԱՄՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ադրբեջանը մեծ կորուստներ է կրում հայերի ներխուժման հետեւանքով», հինգշաբթի օրը Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հետ հանդիպումից հետո հայտարարեց Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը: Անատոլիական գործակալությունը հաղորդում է, որ Ադրբեջանի ղեկավարը Ստամբուլ է ժամանել Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի նիստին մասնակցելու համար:

Թուրքիայի նախագահը միջազգային հարաբերություններում անընդունելի համարեց այն իրավիճակը, երբ մի պետություն զենքով գրավում է մյուսի տարածքը: «Խոսք անգամ լինել չի կարող այն մասին, որ Թուրքիան բարեհոգիական հարաբերություններ հաստատի զավթիչ Հայաստանի հետ», ասաց Դեմիրելը: «Թուրքիան սենհրաժեշտ քայլեր կձեռնարկի շրջանում խաղաղության հաստատման համար, շարունակեց նա: Հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման հարցը կլուծվի ԱՄՆ պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերի հետ իմ հանդիպման ժամանակ», խոստացավ Թուրքիայի նախագահը:

Ադրբեջանը, իր հերթին հայտարարեց Հեյդար Ալիեւը, Հայաստանի հետ տարածայնությունների խաղաղ կարգավորման կողմնակից է: Նա զգուշացրեց հայտնեց այն կարծիքի մասին, որ Թուրքիան այդ հակամարտության լուծման մեջ կողմնակի դիտորդ չէ:

Ադրբեջանի նախագահը նաեւ բանակցեց Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերի եւ արտգործնախարար Հիքմեթ Չեթինի հետ:

ՀԱՄԱՌՈՏ

Ազատվեցին եւս 200 պաղեստինցիներ

ԹԵԼ ԱՎԻՎ, 10 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելը բանտերից ազատեց եւս մի քանի հարյուր պաղեստինցի կալանավորների, որոնք պատիժ էին կրում Ինթիֆադային եռանդագին մասնակցելու համար: Հինգշաբթի երեկոյան 200-ից ավելի կալանավորներ վերադարձան Գազայի հատվածում գտնվող իրենց տներ: Իսրայելի բանակի մամլո քարտուղարը հայտարարեց, որ ազատ արձակված պաղեստինցիները Իսրայելի եւ ՊԱԿ-ի հաշտության համաձայնագրերի դեմ հանդես եկող իսլամական խմբավորումների անդամներ չէին: Նրանք նաեւ մեղսակից չէին եղել Իսրայելի քաղաքացիների սպանություններին: Երկկողմ համաձայնությունների համապատասխան ազատվելիք 5000 կալանավորներից առայժմ բանտերից ազատ է արձակվել հազիվ կեսը:

Երկրաշարժ Հարավային Ամերիկայում

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 10 ՀՈՒՆԻՍ, ՍՏԱՍ: Ուժեղ, անսովոր կերպով խորը ստորերկրյա ցնցումներ են պատահել ամբողջ Հարավային Ամերիկայի տարածքում, հինգշաբթի գիշեր: 8,2 բալ ուժգնությամբ այդ ցնցումները զգացվել են նույնիսկ Կանադայում: Կորուստների մասին տեղեկություն չի հաղորդվել, սակայն էպիկենտրոնը գտնվում է Բոլիվիայում: Մյուս կողմից, Կոլումբիայում երկուշաբթի օրը պատահած երկրաշարժի եւ հողասահքերի զոհերի թիվն անցել է 1000-ը:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Մահապարտ օդաչուն եւ նրա կինը դիմել են ներման խնդրանքով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 10 ՀՈՒՆԻՍ, ՄՆԱՐՔ: Մայիսի 23-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինվորական տրիբունալի կողմից առավելագույն պատժաչափի դատապարտված Ադրբեջանի ռազմաօդային ուժերի զինվորական օդաչու Յուրի Բելիչենկոն եւ այս օրերին Ստեփանակերտում գտնվող նրա կինը՝ Ամերլանա Բելիչենկոն, ներման խնդրանքով դիմել են ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությանը: Այդ մասին հաղորդեցին ԼՂՀ-ի տեղեկատվության ու մամուլի դեպարտամենտում:

«Ես հուսով եմ ԼՂՀ-ի ղեկավարության բարյացակամ վերաբերմունքին ու գթասրտությանը ամուսնուս նկատմամբ», լրագրողներին ասաց Ամերլանա Բելիչենկոն:

Ազգությամբ ուկրաինացի Յուրի Բելիչենկոյի մարտական թռիչքները խփվել էր օգոստոսի 20-ին Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքի վրա ադրբեջանական օդուժի ձեռնարկած հերթական օդային հարձակման ժամանակ: Դատավարության ընթացքում օդաչուն ճանաչվել է վարձկան եւ դատապարտվել մահապատժի:

ԿԻԵՎ

Ուկրաինացիների զգալի մասը դեմ է անկախությանը

ԿԻԵՎ, 10 ՀՈՒՆԻՍ, ՄՆԱՐՔ: Ուկրաինայի արեւելքի ու հարավի, ինչպես նաեւ Ղրիմի Հանրապետության բնակիչների 47 տոկոսը ներկայումս դեմ են Ուկրաինայի անկախությանը: Այդ մասին հունիսին անցկացված սոցիոլոգիական վերջին հարցման արդյունքներին նվիրված մամլո ասուլիսում հայտնեց Ուկրաինայի «ժողովրդավարական» նախաձեռնություններ սոցիոլոգիական ծառայության ղեկավարներից մեկը՝ Վիկտոր Ներոժենկոն:

Ընդսմին, այդ շրջանների բնակիչների 32 տոկոսը ճգնաժամից Ուկրաինայի դուրս գալու գլխավոր պայմանը համարում է ԽՍՀՄ վերականգնումը: Ներոժենկոյի խոսքերով, դրիմցիների եւ Դոնբասի բնակիչների միայն 5 տոկոսն է իրեն համարում ուկրաինացի. «բայց նրանք չեն շտապում նաեւ իրենց ռուս անվանել»: Ղրիմում Ռուսաստանի հետ միավորվելու օգտին հանդես է գալիս բնակչության ընդամենը 17 տոկոսը, մինչդեռ շրջանային ինքնուրույնությանը կողմ է հարցման մասնակիցների 40 տոկոսը: Մոտավորապես նույնքանի հարաբերակցություն կա նաեւ հանրապետության հարավային ու արեւելյան մյուս շրջաններում:

digitised by A.R.A.R.@

տեղական

ՀԱՍԱՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանն աղրում է, ես տեսա մարդկանց ժպիտները»

Սկիզբը էջ 1

Իր գոհունակությունը գեներալ Պավել Գրաչովի այցի արդյունքներից նշեց պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Մեզ տված հարցազրույցում նա ասաց, որ սա շատ կարևոր, լուրջ այց էր, որի հիմնական արդյունքը կդառնան Հայաստանում ռուսական ռազմական բազաների տեղակայումը, հանրապետության հակաօդային պաշտպանության եւ այստեղ տեղակայված ռուսական զորախմբի հզորացումը: Ըստ նախարարի, Հայաստանում Ռուսաստանի զորքերը ուժեղացվեցին ուղղաթիռներով ու ինքնաթիռներով:

Մանրամասնելով Հայաստանում ռուսական ռազմական բազաների ստեղծման հարցը, Սերժ Սարգսյանը, ճշտեց, որ այն լուծված է: Գործնականում չի մնացել բազաների մասին ստորագրվելիք պայմանագրի որեւէ փոփոխությունների ենթակա, ասաց նա: Նախարարի կարծիքով, այդ փաստաթուղթը կստորագրվի ու կվավերացվի այս ամռան ընթացքում եւ, իր խոսքերով, «մենք գործի կանցնենք»:

Խոսելով ռուսական ռազմական բազաների համար հողատարածքների վարձակալության եւ այլ հարցերի մասին, նախարարն ասաց, որ հայկական կողմը պատրաստ է լիովին այն լուծել փոխշահավետության հիման վրա: Դա կարող է լինել Ռուսաստանում ռազմական բարձրագույն ուսումնական հաստատություններում հայ մասնագետների պատրաստումը, Հայաստանում տեղակայված ռուսական զորքերին անվճար կոմունալ ծառայությունների տրամադրում եւ այլն, նշեց Սերժ Սարգսյանը. Նրա կարծիքով, Ռուսաստանի ռազմական բազաները մեզանում գոյություն կունենան արդեն սեպտեմբերի 1-ին: Ինչ վերաբերում է առաջադիմության գործողության տեւողությանը, Սերժ Սարգսյանն ասաց, որ Հայաստանը կցանկանար, որ այդ փաստաթուղթը հավերժական լինի:

Իր հերթին, Հայաստանում ՌԴ արտակարգ ու լիազոր դեսպան Վլադիմիր Սուտոիչինը կարծիք հայտնեց, թե գեներալ Պավել Գրաչովի այցը Հայաստան շատ կարեւոր քաղաքական իրադարձություն է, որը վերաբերում է ոչ միայն ռազմական խնդիրներին: «Այն, ասաց դեսպանը, շատ կարեւոր էր Հայաստանի հետ մեր դաշնակից հարաբերությունների ամրապնդման տեսակետից ինչպես ԱՊՀ կոլեկտիվ անվտանգության պայմանագրի շրջանակներում, այնպես էլ երկկողմ հիման վրա»:

Ռուսաստանի պաշտպանության նախարարին ճանապարհեցին ՀՀ ոստիկանության նախարար Վազգեն Սարգսյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ՀՀ պաշտպանության փոխնախարարներ: Այստեղ էին նաեւ ՀՀում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Վլադիմիր Սուտոիչինը, ՀՀի տարածքում տեղակայված ՌԴ զինված ուժերի զորախմբի ղեկավար գեներալ մայոր Ալեքսեյ Տրետյակովը, պաշտոնական այլ անձինք:

Բանակի գեներալ Պավել Գրաչովի այցն անցավ պատմության գիրկը: Այն հիրավի պատմական էր ոչ միայն քաղաքական, ռազմական եւ այլ առումներով: Քչերը նկատեցին, որ Ռուսաստանի պաշտպանության նախարարը մեր հանրապետություն առաջին պաշտոնական հյուրն էր, որին դիմավորեցին բարձրացված պետական դրոշներով, օրհներգերի կատարմամբ, զինվորական պատվո պահակով: Ընդունելության կազմակերպիչների ջանքերով, ըստ էության, առաջին քայլն արվեց Հայաստանի նորանկախ հանրապետության պետական արարողակարգի կայացման գործում: Դա նշեցին բոլոր ելույթները եւ սակավաթիվ լրագրողները (տողերիս հեղինակը միակ լրագրող էր) ճանապարհելու արարողության ժամանակ:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ.

Այսպիսի 31-ին Հայոց համազգային շարժման վարչության նախագահ Տեր Հուսիկ Լազարյանը իր ծրագրային հեռուստաելույթում փորձեց քաղաքական գնահատականներ տալ հանրապետության ընդհանուր վիճակին, այդ թվում հայտարարելով, թե իշխանության բարձր օղակներում կան ուժեր, որոնց շահավետ է նման անկատար վիճակը: Ի՞նչ կոնկրետ ուժերի մասին է խոսքը, ովքե՞ր են դրանք, կա՞ն արդյոք որոշակի անուններ, այս հարցերին ՀՀՇ վարչության նախագահը չպատասխանեց: Փոխարենը փաստեց, թե ում է ուղղված քննադատությունը: «Օրինականությունը հաստատվում է ոչ թե հայտարարություններով, այլ ամենօրյա ճանաչախաղով, մանավանդ խորվարդի մարմիններում», եւ ավելին, «մենք այլեւս չենք հանդուրժի նրանց գործողություններին, ովքեր այս կամ այն դիտավորությամբ կփորձեն կասեցնել բարեփոխումները կամ Սահմանադրության ընդունումը, նրանց, ովքեր կարգ ու կանոն ապահովելու քողի տակ ոտնահարում են օրինականությունը»: Կազմակերպության հեղինակության վերականգնման փո՞րձ է սա, թե «աթոռների» ու անհատների պայքար: Դժվար է ասել, քանի որ հենց ՀՀՇ վարչության նիստերում էլ միանշանակ պատկեր չի ստեղծվում. տատանվողներն ավելի շատ են, քան սկզբունքային դիրքորոշում ունեցողները, խփում են եւ սալին, եւ մեխին: Բայց այն խոսքությունը, որ ՀՀՇ վարչության յոթ անդամներ ստորագրել են Տեր Հուսիկ Լազարյանի վերոհիշյալ հայտարարության տակ եւ այն ուղարկել հանրապետության նախագահին, նույնպես որոշ եզրակացություններ անելու առիթ է տալիս: Այդ յոթնյակի մեջ են, Տեր Հուսիկ Լազարյանից բացի, Էդուարդ Եգորյանը, Արա Սահակյանը, Կարապետ Ռուբինյանը, Սամվել Գեւորգյանը, Բագրատ Ասատրյանը եւ Աշոտ Ոսկանյանը: Ըստ որոշ տվյալների, նրանց աջակցում է նաեւ վարչապետ Հրանտ Բագրատյանը: Մի խոսքով, ստեղծվել է համախոհների խումբ հանուն կամ ընդդեմ ինչ որ գաղափարների, կամ անձերի: Եւ դա այնքան էլ հասակ չէ, մանավանդ, որ թեեւ Էդվարդ Եգորյանը հրաժարվեց այդ թեմայով խոսելուց, բայց նաեւ նշեց, թե վստահ է, որ իրենք արդյունքի կհասնեն: Իսկ ո՞րն է ակնկալված արդյունքը: Թերեւս այդ անորոշության մեջ որոշակի պարզեցում է մտցնում ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ, ՀՀՇ վարչության անդամ Արա Սահակյանի հետ ունեցած մեր կարճ զրույցը, որը մեզ հաջողվեց վերցնել Եռօրյա նիստերի ավարտից հետո:

– Ո՞րն է ձեր վերաբերմունքը ՀՀՇ վարչության նախագահի հեռուստաելույթի նկատմամբ...

– ՀՀՇ վարչության նախագահ Տեր-Հուսիկ Լազարյանի մայիսի 31-ի հեռուստատեսային ելույթի տեքստը ներկայացվել է հանրապետության նախագահին, եւ այնտեղ դրված է նաեւ իմ ստորագրությունը: Ելույթում արտահայտված է անհանգստություն Հայաստանում քաղաքական զարգացման հեռանկարների կապակցությամբ առանձնացնելով Սահմանադրության, տնտեսական բարեփոխումների եւ օրինականության հարցերը: Դրանք նոր հարցադրումներ չեն, դարգարդես ռելիեֆային ձեւով առանձնացվել են հենց այս պահի առնչությամբ, որովհետեւ կարծես խորհրդարանը սպառել է Սահմանադրության ընդունման հնարավորությունները, Գխ նախագահությունում հիմնականում դաշնակցության ներկայացուցիչները մեծ խոչընդոտներ են հարուցում տնտեսական բարեփոխումների ճանապարհին, նրանց, ովքեր կարգ ու կանոն ապահովելու քողի տակ ոտնահարում են օրինականությունը»: Կազմակերպության հեղինակության վերականգնման փո՞րձ է սա, թե «աթոռների» ու անհատների պայքար: Դժվար է ասել, քանի որ հենց ՀՀՇ վարչության նիստերում էլ միանշանակ պատկեր չի ստեղծվում. տատանվողներն ավելի շատ են, քան սկզբունքային դիրքորոշում ունեցողները, խփում են եւ սալին, եւ մեխին: Բայց այն խոսքությունը, որ ՀՀՇ վարչության յոթ անդամներ ստորագրել են Տեր Հուսիկ Լազարյանի վերոհիշյալ հայտարարության տակ եւ այն ուղարկել հանրապետության նախագահին, նույնպես որոշ եզրակացություններ անելու առիթ է տալիս: Այդ յոթնյակի մեջ են, Տեր Հուսիկ Լազարյանից բացի, Էդուարդ Եգորյանը, Արա Սահակյանը, Կարապետ Ռուբինյանը, Սամվել Գեւորգյանը, Բագրատ Ասատրյանը եւ Աշոտ Ոսկանյանը: Ըստ որոշ տվյալների, նրանց աջակցում է նաեւ վարչապետ Հրանտ Բագրատյանը: Մի խոսքով, ստեղծվել է համախոհների խումբ հանուն կամ ընդդեմ ինչ որ գաղափարների, կամ անձերի: Եւ դա այնքան էլ հասակ չէ, մանավանդ, որ թեեւ Էդվարդ Եգորյանը հրաժարվեց այդ թեմայով խոսելուց, բայց նաեւ նշեց, թե վստահ է, որ իրենք արդյունքի կհասնեն: Իսկ ո՞րն է ակնկալված արդյունքը: Թերեւս այդ անորոշության մեջ որոշակի պարզեցում է մտցնում ՀՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալ, ՀՀՇ վարչության անդամ Արա Սահակյանի հետ ունեցած մեր կարճ զրույցը, որը մեզ հաջողվեց վերցնել

Լուսանկարը՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

դարձիցով, ՀՀՇ վարչության նախագահի հայտարարությունը կատված էր առաջադիմությունների հետ եւ ավելի շատ ինքնավերականգնման բնույթ է կրում: Պահը ընտրված է խորհրդարանում քննարկվող հարցերի հրատապությա՞մբ, թե ներկուսակցական այլ շարժառիթներով:

– Ի տարբերություն շատ կուսակցությունների, ՀՀՇ-ն ներկառուցվածքային առումով «երկաթյա շարք» չունի: Այն ժողովրդավարական սկզբունքներով ստեղծված կազմակերպություն է եւ ցանկացած տարակարծություն, այլախոհություն, թեւերի ու հոսանքների գոյությունը նրա ներսում ընդունելի է: Ինչ վերաբերում է ձեր որակավորմանը, թե ՀՀՇ-վարչության նախագահի ելույթը հեղինակությանն վերականգնման ենթատեքստ ունի, կասեմ, որ ՀՀՇ-ն մեղքերի քավության կարիք չունի: Հայաստանի Հանրապետության ստեղծման գործում ամենամեծ ավանդը ունեցել է Հայոց համազգային շարժումը: Պարզապես քաղաքական զարգացման ներկա փուլում կարեւորում ենք վերը նշված երեք կարեւոր հարցերը:

– Հայոց համազգային շարժման վարչությունը կամ նրա մի մասը արժարծո՞ւմ է ներքին գործերի նախարարի հրաժարականի հարցը:

– Լուրջ քաղաքական հարցադրումներ որեւէ անձի հետ կապելը նեղացնում եւ թուլացնում է հարցադրման բուն իմաստը:

– Իսկ ճի՞շտ է, որ ստեղծվել է «յոթնյակ» ընդդեմ ներքին գործերի նախարարության:

– Անմիտ եւ անընդունելի կլինի որեւէ պետական գործչի կողմից իր նմանների հետ կոալիցիա կազմել պետական իշխանության որեւէ մարմնի դեմ: Դա հակապետական գործունեություն է: Կրկնում եմ, եղել են հրապարակային կոնկրետ հարցադրումներ, դրանց անշուշտ կարող են հետեւել ինչ-որ քայլեր: Որոշ քայլեր պարտավոր է կատարել կառավարությունը հատկապես տնտեսական բարեփոխումներն աշխուժացնելու ճանապարհին: Կան քայլեր, որոնք պետք է կատարեն կուսակցությունները, փորձելով գտնել միմյանց մերձենալու ուղիներ Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունման համար: Եւ կան քայլեր, որ իրավական մարմինները եւ դատական համակարգը կարող են եւ պարտավոր են համատեղ աշխատել օրինականության ամրապնդման ուղղությամբ: Անթույլատրելի է խանդոտ վերաբերմունքը միմյանց նկատմամբ եւ անիմաստ մրցակցությունը առաջինը լինելու համար:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ.

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ

Ի՞նչ է ուզում ՀՀՇ-ն կամ խաղի մեջ է մտնում «յոթնյակը»

ՀԱՄԱՌՈՏ

Էներգետիկային նվիրված սեմինար

Հունիսի 27-ից 29-ը Ֆրանսիայի դեպարտամենտը կազմակերպում է սեմինար, որի հիմնական նպատակն է տեսակետներ փոխանակել պետության եւ էներգետիկայի բնագավառում աշխատող ձեռնարկությունների միջեւ եղած տարբեր կարգի հարաբերությունների շուրջ: Սեմինարը տեղի կունենա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում:

Ֆրանսիայից կլինեն ներկայացուցիչներ էներգետիկայի հետ առնչվող տարբեր նախարարություններից, այդ բնագավառում աշխատող ձեռնարկություններից (Ֆրանսիայի գազ, Ֆրանսիայի էլեկտրականություն, Ֆրանսիայի օգտագործման վերահսկմամբ զբաղվող գործակալությունից եւ Բրյուսելի եւրոպական հանձնաժողովի էներգիայի գլխավոր վարչությունից:

Հայկական կողմից սեմինարին կմասնակցեն ներկայացուցիչներ էներգետիկայի, արդյունաբերության, էկոնոմիկայի նախարարություններից, Հայգազ, Հայէներգո ձեռնարկություններից, ատոմակայանից (որտեղ էներգիա արտադրող ձեռնարկություն), էներգիայի տնտեսմամբ զբաղվող տարբեր կազմակերպություններից, ինչպես նաեւ մեծ ձեռնարկություններից, որոնք էներգիայի սպառող են եւ որոշ վարչատարածքային միավորումներից:

Գազ կա, սակայն հասանելի չէ

ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Չնայած կա հնարավորություն հանրապետություն մտնող գազի քանակից մայրաքաղաքի բնակչությանը հասկացնելու, այնուամենայնիվ, ներկայումս դա տեխնիկապես անհնար է: Այս մասին հայտնել է Հայգազ միավորման տնօրեն Ռ. Ադոնցը: Երկարատեւ ընդմիջումից հետո ստուգված չեն մայրաքաղաքի ներսի 1210 կմ երկարությամբ գազամուղը եւ 100 հազար բնակարանների գազամատակարարման համակարգերը: Այդ աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է առնվազն 3 ամիս ժամանակ: «Մինչեւ չկատարվի համակողմանի փորձարկում եւ ստուգում, անհնար է բնակչությանը գազ հասկացնել» ասել է Ռ. Ադոնցը: Այսպիսով, անհիմն են լուրերը, թե հուլիսի 1-ից կվերսկսվի գազամատակարարումը բնակչությանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ անվստահություն սերմանելու փորձերը դատապարտված են»

Հունիսի 10-ին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան մամուլի ծառայությունը տարածել է հետեւյալ հայտարարությունը.

«Վերջին ժամանակներս տեղական որոշ թերթերի էջերում հակառուսական ուղղվածությամբ հոդվածներ են հրապարակվում, որոնք ակնհայտորեն օտար ձեռագիր ունեն:

... Հայտնի է՝ ով վճարում է, նա է պատվիրում երաժշտությունը:

Կարելի էր ուշադրություն չդարձնել դրա վրա, եթե այս հրապարակումները (որոնք մի շարք դեպքերում Հայաստանում ՌԴ դեսպանի անձի դեմ հարձակումների բնույթ են կրում) հետեւում հողարկված չլինեին որոշակի ուժերի համաձայնեցված գործողությունները, որոնք նպատակ ունեն արատավորել մերձավոր արտասահմանի երկրների նկատմամբ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը:

Երեւի թե պատահական չէ, որ այսպիսի հոդվածների երեւան գալը համընկավ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում նկատելի տեղաշարժի հետ, որը ձեռք բերվեց հիմնականում Ռուսաստանի եւ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի ջանքերով: Ռուսաստանը նախկին ԽՍՀՄ ինքնիշխան հանրապետություններին իր կամքը չի թելադրում, չի խառնվում նրանց ներքին գործերին, նրանց կրած դժվարություններում շահ չի փնտրում, ոչ մեկին չի պարտադրում ընդունել իր բարեկամությունը: Նրան խորթ է նման քաղաքականությունը:

Ռուսաստանը շահագրգռված է իր սահմաններում եւ դրանց հարակից տարածաշրջաններում խաղաղությամբ եւ իրավիճակի կայունությամբ, որպեսզի առանց ուշադրությունը շեղելու լուծի սեփական ներքաղաքական, տնտեսական եւ այլ խնդիրները:

Կասկած չի հարուցում, որ Ռուսաստանի բնամիների եւ թվացյալ բարեկամների՝ զարգացման բարձրակետում գտնվող ռուս-հայկական հարաբերություններն արգելակելու, Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ անվստահություն սերմանելու բոլոր փորձերը դատապարտված են ձախողման»: ԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Վաճառվում է դաշնամուր
Զանգահարել 524011

ՈՍՍԿԵՎԵՐ ԱԶԳԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (7.8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ՊՈՒԵԼ ԴԱԼԼԱԲԵԱՆԻ
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetutian st., Yerevan, Armenia, 375010
Published in U.S.A. by AZG Publishing Co., 22122 Sherman Way, Suite 203, Canoga Park, CA 91303. Call (818) 598-0423 Fax: (818)340-9819 for subscription rates.
Publisher - Հրատարակիչ
Dr. Krikor Krikorian - Դոկտ. Գրիգոր Գրիգորեան
Executive Director - Տնօրէն
Vartan Karaoghlanian - Վարդան Գարաղլանեան
Production Manager - Raffi Shoubookian
Արտադրութիւն Ռաֆֆի Շուբուխեան
«ԱԶԳ» օրաթերթը հայտարարվում է ԱՄՆ «ՍԻՄՈՆԱՆ» ՍՊԸ-ի հանձնակատարային Վարչություն 7.8852 281425, Թելեֆաքս 7.8852 285082
E-MAIL INTERNET: ROOT. YEREVAN @ REX. IASNET. COM

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՀՐՋԱՆ ԱՊՀ

ԲԱՔՈՒ, 10 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի կողմից Բիշքեկի արձանագրության ստորագրումից հետո իշխանությունների եւ ընդդիմության դիմակայության մայիսյան բռնկումը հունիսի սկզբներին փոխվեց որոշակի անդորրի: Ադրբեջանի ժողովրդական ճակատը եւ նրան ղեկավարող մի շարք կուսակցություններ ու հասարակական-քաղաքական շարժումներ, որոնք հանդես են գալիս, ինչպես իրենք են ընդունում, «անձնատրական» փաստաթղթի դեմ, շոշափելի ղեկավարում հոգնել է թե ներքին գժտություններից եւ թե դաշտերազմից: Նրան մղեցին այնքան էլ հեշտ չէ ոչ-ի հանել «բոլորս մեկ մարդու նման կմեռնենք հանուն հողի» բնույթի ամբոխավարական կարգախոսներով: Ինչպես վկայում են սոցիոլոգիական մի շարք ծառայությունների հարցումները, Ադրբեջանի բնակչության մեծ մասն ուզում է Ղարաբաղի դաշտերազմի շուտափույթ ավարտ եւ դաշտաբաս է ողջունել կառավարության ցանկացած քայլերն այդ ուղղությամբ: Մարդկանց կարողանում է հասկանալ, քանի որ ռազմական գործողությունների շարունակման եւ սոցիալ-տնտեսական ճգնաժամի ծգծգման հետ կապված բոլոր դժվարություններն իրենց ուսերին են կրում ոչ թե քաղաքագետները, այլ շարքային քաղաքացիները: Եւ քանի որ շուտափույթ խաղաղության եւ հարաբերական բարեփոխության իրենց հույսերը նրանք այնուամենայնիվ ավելի շատ կապում են իշխանությունների, Հեյդար Ալիեւի թիմի հետ, ակնհայտորեն հակված չեն նրանցվել «հանրահավաքային տարերքի» մեջ:

Այդուհանդերձ առավել արմատական ընդդիմությունը դրականորեն է գնահատում իր մայիսյան ելույթների արդյունքները: Դրա ներկայացուցիչների խոսքերով, մայ ելույթները Արեւմուտքին դրդեցին աշխուժանալ, թույլ չտալով, որ «Ռուսաստանը լիովին տիր նախաձեռնությանը Ղարաբաղի խնդրի կարգավորման միջնորդության ասպարեզում»: Ընդդիմության ղեկավարները պնդում են, որ հենց այդ ժամանակաշրջանում առավել ուժեղացել են հայ-ադրբեջանական հակամարտության լուծմանն ուղղված ԵԱՀԽ ջանքերը: Մյուս կողմից, թե ԱՄՆ-ը եւ թե Մեծ Բրիտանիան ավելի ու ավելի համառորեն սկսել են կրկնել, թե իրենք հանդես են գալիս բացառապես ԵԱՀԽ շրջանակներում կարգավորման ռուսական ծրագրի իրականացման օգտին:

Ընդդիմությունը գտնում է նաեւ, թե նրանց հաջողվեց ապացուցել, թե ինչպիսի անկարելի վիճակի մասին է վկայում թեկնածու այն, որ նա հրաժարվեց ԱԺՄ-ն ներկայացնող ղեկավարների խորհրդարանի կազմից դուրս բերելու առիթով բողոքի զանգվածային ձեռնարկումներից (նախկինում նման գործողություններն անխուսափելի կլինեին): Հավանաբար որոշակի դեր խաղացին նաեւ իշխանությունների կոշտ գործողություններին բախվելու երկյուղները, որոնք մայիսի 21-ին բավական կողմնորոշեցին «կարգուկանոն հաստատելու» քաղաքում, ինչպես նաեւ այն փաստը, որ Գյանջայի անցյալ տարվա դեպքերից հետո վարկը կորցրած ԱԺՄ-ն այդպես էլ չկարողացավ այն վերականգնել:

Դրա ընդդիմության դաշտության եւս մեկ դաշնակցի, որը բերեց զլխավորն է: Ժողովուրդը հավասարապես հոգնել է թե ներքին գժտություններից եւ թե դաշտերազմից: Նրան մղեցին այնքան էլ հեշտ չէ ոչ-ի հանել «բոլորս մեկ մարդու նման կմեռնենք հանուն հողի» բնույթի ամբոխավարական կարգախոսներով: Ինչպես վկայում են սոցիոլոգիական մի շարք ծառայությունների հարցումները, Ադրբեջանի բնակչության մեծ մասն ուզում է Ղարաբաղի դաշտերազմի շուտափույթ ավարտ եւ դաշտաբաս է ողջունել կառավարության ցանկացած քայլերն այդ ուղղությամբ: Մարդկանց կարողանում է հասկանալ, քանի որ ռազմական գործողությունների շարունակման եւ սոցիալ-տնտեսական ճգնաժամի ծգծգման հետ կապված բոլոր դժվարություններն իրենց ուսերին են կրում ոչ թե քաղաքագետները, այլ շարքային քաղաքացիները: Եւ քանի որ շուտափույթ խաղաղության եւ հարաբերական բարեփոխության իրենց հույսերը նրանք այնուամենայնիվ ավելի շատ կապում են իշխանությունների, Հեյդար Ալիեւի թիմի հետ, ակնհայտորեն հակված չեն նրանցվել «հանրահավաքային տարերքի» մեջ:

Այդուհանդերձ առավել արմատական ընդդիմությունը դրականորեն է գնահատում իր մայիսյան ելույթների արդյունքները: Դրա ներկայացուցիչների խոսքերով, մայ ելույթները Արեւմուտքին դրդեցին աշխուժանալ, թույլ չտալով, որ «Ռուսաստանը լիովին տիր նախաձեռնությանը Ղարաբաղի խնդրի կարգավորման միջնորդության ասպարեզում»: Ընդդիմության ղեկավարները պնդում են, որ հենց այդ ժամանակաշրջանում առավել ուժեղացել են հայ-ադրբեջանական հակամարտության լուծմանն ուղղված ԵԱՀԽ ջանքերը: Մյուս կողմից, թե ԱՄՆ-ը եւ թե Մեծ Բրիտանիան ավելի ու ավելի համառորեն սկսել են կրկնել, թե իրենք հանդես են գալիս բացառապես ԵԱՀԽ շրջանակներում կարգավորման ռուսական ծրագրի իրականացման օգտին:

Ընդդիմությունը գտնում է նաեւ,

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բաքու. Անկայուն անդորր

թյուն կրեցին, որեւէ զգալի աջակցություն չգտնելով բնակչության շրջանում:

Ընդդիմության ներկայիս անկարգ վիճակի մասին է վկայում թեկնածու այն, որ նա հրաժարվեց ԱԺՄ-ն ներկայացնող ղեկավարների խորհրդարանի կազմից դուրս բերելու առիթով բողոքի զանգվածային ձեռնարկումներից (նախկինում նման գործողություններն անխուսափելի կլինեին): Հավանաբար որոշակի դեր խաղացին նաեւ իշխանությունների կոշտ գործողություններին բախվելու երկյուղները, որոնք մայիսի 21-ին բավական կողմնորոշեցին «կարգուկանոն հաստատելու» քաղաքում, ինչպես նաեւ այն փաստը, որ Գյանջայի անցյալ տարվա դեպքերից հետո վարկը կորցրած ԱԺՄ-ն այդպես էլ չկարողացավ այն վերականգնել:

Դրա ընդդիմության դաշտության եւս մեկ դաշնակցի, որը բերեց զլխավորն է: Ժողովուրդը հավասարապես հոգնել է թե ներքին գժտություններից եւ թե դաշտերազմից: Նրան մղեցին այնքան էլ հեշտ չէ ոչ-ի հանել «բոլորս մեկ մարդու նման կմեռնենք հանուն հողի» բնույթի ամբոխավարական կարգախոսներով: Ինչպես վկայում են սոցիոլոգիական մի շարք ծառայությունների հարցումները, Ադրբեջանի բնակչության մեծ մասն ուզում է Ղարաբաղի դաշտերազմի շուտափույթ ավարտ եւ դաշտաբաս է ողջունել կառավարության ցանկացած քայլերն այդ ուղղությամբ: Մարդկանց կարողանում է հասկանալ, քանի որ ռազմական գործողությունների շարունակման եւ սոցիալ-տնտեսական ճգնաժամի ծգծգման հետ կապված բոլոր դժվարություններն իրենց ուսերին են կրում ոչ թե քաղաքագետները, այլ շարքային քաղաքացիները: Եւ քանի որ շուտափույթ խաղաղության եւ հարաբերական բարեփոխության իրենց հույսերը նրանք այնուամենայնիվ ավելի շատ կապում են իշխանությունների, Հեյդար Ալիեւի թիմի հետ, ակնհայտորեն հակված չեն նրանցվել «հանրահավաքային տարերքի» մեջ:

Այդուհանդերձ առավել արմատական ընդդիմությունը դրականորեն է գնահատում իր մայիսյան ելույթների արդյունքները: Դրա ներկայացուցիչների խոսքերով, մայ ելույթները Արեւմուտքին դրդեցին աշխուժանալ, թույլ չտալով, որ «Ռուսաստանը լիովին տիր նախաձեռնությանը Ղարաբաղի խնդրի կարգավորման միջնորդության ասպարեզում»: Ընդդիմության ղեկավարները պնդում են, որ հենց այդ ժամանակաշրջանում առավել ուժեղացել են հայ-ադրբեջանական հակամարտության լուծմանն ուղղված ԵԱՀԽ ջանքերը: Մյուս կողմից, թե ԱՄՆ-ը եւ թե Մեծ Բրիտանիան ավելի ու ավելի համառորեն սկսել են կրկնել, թե իրենք հանդես են գալիս բացառապես ԵԱՀԽ շրջանակներում կարգավորման ռուսական ծրագրի իրականացման օգտին:

Ընդդիմությունը գտնում է նաեւ,

ՎՐԱՍՏԱՆ

Ներքին զորքերի հրամանատար Չիկովանիի հարցազրույցը

Խաղաղարարներ կոնֆլիկտի գոտում. Ինչ կտան դրանք

ԹԲԻԼԻՍԻ, 9 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունիսի 8-ին Վրաստանի բերքերում հրադադարվեց երկրի ներքին զորքերի հրամանատար, գեներալ-մայոր Վլադիմիր Չիկովանիի հարցազրույցը, որը վերաբերում է վրաց-աբխազական հակամարտության գոտի խաղաղարար ուժեր մտցնելու խնդրին: Չիկովանիի խոսքերով, խաղաղարար գործողությանը կմասնակցեն ԱՊՀ գրեթե բոլոր երկրների զորային ստորաբաժանումներ, սակայն սկզբում ենթադրվում է զումարտակներ բերել Լենինգրադի, Ուրալի եւ Մերձվոլգյան զինվորական օկրուգներից (դրանք կտեղաբաշխվեն Ինգուրիի ՀԷԿ-ի, Գալի քաղաքի շրջանում), իսկ զինվորական դիտորդների ստորաբաժանումը կտեղաբաշխվի Զուգդիդի քաղաքում: Խաղաղարար ուժերի հետ մեկտեղ Գալիում եւ Զուգդիդում կգտնվի Վրաստանում ՄԱԿ-ի դիտորդների խումբը, որի դարականությունները զգալիորեն ընդլայնվել են: «Եթե մինչեւ վերջերս ՄԱԿ-ի դիտորդները գտնվում էին հիմնականում Սուխումում, ապա այժմ վերահսկողության գոտիների կենտրոններում տեղաբաշխվելով, նրանք սանում են ամբողջ տարածքի վերահսկման իրավունք, ասել է գեներալ Չիկովանին: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշման համաձայն, նրանց թիվը կարող է 21-ից հասցվել 88-ի»: Չիկովանին նշել է, որ ամբողջ ծանր տեխնիկան տանկեր, զրահամեքենաներ, հրետանին, ականանետները աբխազական կողմը հետ կքաշի Օչամչիրից այն կողմ, իսկ վրացական կողմը՝ արեւմտյան Վրաստանի Սենակի քաղաքի շրջան, որտեղ ամբողջ տեխնիկան կգտնվի ՄԱԿ-ի խմբի հսկողության տակ: Ինգուրի գետի երկու կողմերում 12 կմ ձգվող անվտանգության գոտու մեջ են մտել Աբխազիայի Գալիի շրջանի հիմնական բնակավայրերը, այդ թվում՝ Գալի քաղաքը: Այդ գոտում որեւէ կողմից զինվոր չի մնա, ոչ էլ աբխազական կողմից, ինչը կաղաքվի զաղթականների անվտանգ վերադարձը: Որոշվել են զաղթականների անցման վայրերը, հսկիչ անցակետերը կգործեն Ինգուրի գետի երկաթուղային եւ ավտոմոբիլային կամուրջների շրջանում: Չիկովանիի կարծիքով, զաղթականների եւ տեղահանվածների անվտանգ վերադարձի երաշխիքը ձեռք բերված համաձայնությունն է, որ որի անվտանգության գոտուն հաջորդում է սահմանափակ սպառազինությունների գոտին, որի դիրքն այնպիսին է, որ նույնիսկ հետ քաշված տեխնիկայի ու հրետանու դաշտահական կրակոցը չկարողանա հասնել անվտանգության գոտի: Երկու գոտիներում խաղաղարար ուժերը չեն խոչընդոտի իշխանության տեղական մարմինների, ինչպես նաեւ ոստիկանության աշխատանքին: Ստեղծվել է վերահսկողության երկու գոտի. հյուսիսայինի կենտրոնը Գալի քաղաքն է, հարավայինինը՝ Զուգդիդը: Խաղաղապահ գործողությունների անաչառ անցկացման համար խաղաղարար ուժերի հրամանատարությունից բացի, որոնց շարքերի, հսկիչ դաշտահակետերի ղեկավարներ ու տեղակալներ, կմասնակցեն նաեւ վրացական կողմի զինվորական ներկայացուցիչներ: Երեք կողմերի ներկայացուցիչները օպերատիվ հերթապահություն կիրականացնեն: Ինչ վերաբերում է Կոդորի կիրճին, ասել է գեներալ Չիկովանին, այնտեղ դարերաբար բռնկվող ռազմական գործողությունները կանխելու նպատակով խաղաղարար ուժերը կանոնավոր դարեկություն կանեն, որը կսկսվի հակամարտության ամբողջ գոտում ուժերի տարանջատման գործողության հետ մեկտեղ: Մեկնարկը դրվեց է տրվի աշխատանքային խմբի խնդրի կատարումից հետո, 5 օրվա ընթացքում:

ՍՈՉԻ

Բոլոր առողջարանները գործում են

ՍՈՉԻ, 9 ՀՈՒՆԻՍ, ՈՒԻԱ ՍՆԱՐԲ- Չմեռային ընդմիջումից հետո եւ «Յուժնի բերեգ» հանգստյան տան բացման շնորհիվ Սոչիի բոլոր 95 առողջարանների աշխատանքը վերսկսվեց: Այս տարի դրանք բավական լավ են դաշտաբասվել ամառային տարեշրջանին: Օրինակ, «Ռուս» առողջարանում շահագործվել է հյուրանոցային նոր համալիր, մի քանի խաղահրապարակ: «Սվետլանա» հանգստի տունն ունի կահավորված բուժական բաժանմունք, «Էլեկտրոնիկայում» կառուցված է 550 տեղանոց մասնաշենք, իսկ «Սպուտնիկում» հայտնվել են ջրային մոտոցիկլներ, հեծանիվներ եւ մոտոռոլերներ: Բոլոր առողջարաններն ծնողների հետ ընդունում են երեխաների, հանգստի տեւողությունը սահմանում հյուրերի ցանկությամբ: Արդեն զբաղեցված են զինվորական եւ ՆԳՆ-ին դաշտականող առողջարանները: Արհմիութենականները առայժմ զբաղեցված են 40 տոկոսով: Ինչպես հայտնեց Սոչիի վարչակազմի առողջարանային գործի եւ զբոսաշրջության կոմիտեի գլխավոր մասնագետ Սվետլանա Կուզմինան, հանգստացողների թիվն օրեցօր աճում է:

Հայտարարություն

Հունիսի 14-ին, ժամը 14-ին, Գողների տան մեծ դահլիճում Ամերիկա եւ Կանադա կատարած ուղեւորությունից իր տպավորությունները կդաշտի Սիլվա Կապուտիկյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայտարարություն

Հայաստանի ազգային գրադարանը ս. թ. հունիսի 9-ից վաճառքի է հանում իր ավելցուկ (բազմօրինակ) գրականությունը:

Վաճառքը կատարվում է նոր շենքի (մուտքը այգու կողմից) առաջին հարկում, հինգշաբթի եւ ուրբաթ օրերը, ժ. 10-15:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՄԱՌՈՏ

«Ազերբայջանի» առաջին համարն Անգլիայում

ԼՈՆԴՈՆ, 9 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մեծ Բրիտանիայում Ադրբեջանի դեսպանության եւ այդ երկրի ադրբեջանական համայնքի համատեղ ջանքերով, Լոնդոնում լույս տեսավ «Ազերբայջան» նոր թերթի առաջին համարը: Ինչպես հաղորդում է Ադրբեջանի ԱԳՆ մամլո ծառայությունը, թերթում զետեղված են հաղորդումներ Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների օկուպացման մասին, ինչպես նաեւ հանրաքեսության մշակութային կյանքին նվիրված նյութեր:

Սահմանապահները կանխել են լաստանավի դայթյունը

ԴՈՒՇԱՆԲԵ, 9 ՀՈՒՆԻՍ, ՈՒԻԱ ՍՆԱՐԲ- Տաջիկստանում ռուսական սահմանապահ զորքերի կարգախումբը չորեքաբթի օրը կանխեց այն լաստանավի դայթյունը, որը 242 տաջիկ գաղթականների, հիմնականում կանանց ու ծերունիների, աֆղանական Շերխան նավահանգստից փոխադրում էր Տաջիկստանի տարածք: Կարգախումբը ժամանակին հայտնաբերեց եւ ոչնչացրեց լաստանավում թաքցված ականը:

Ռուսաստան-ՆԱՏՕ. Ավելի սերտ կապեր

ՍՏԱՄԲՈՒԼ, 10 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԱՏՕ-ի խորհրդի Ստամբուլում ավարտված նստաշրջանում արտաքին գործերի նախարարները հանգեցին Ռուսաստանի հետ ավելի սերտ կապեր հաստատելու անհրաժեշտության մտքին: Նրանք նպատակահարմար են գտնում անհրաժեշտության դեպքում Մոսկվայի հետ հատուկ խորհրդակցություններ անցկացնել այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են Բոսնիայի ճգնաժամը, խաղաղարար ուժերի գործողությունները, միջուկային սպառազինությունների վերահսկումը: Նախարարները մերժեցին Հյուսիսատլանտյան դաշինքի որոշումների առնչությամբ Ռուսաստանի Դաշնությանը վետոյի իրավունք տրամադրելու հնարավորությունը, այդ թվում եւ ՆԱՏՕ-ի մեջ նոր անդամների ընդունման հարցում:

ԱՄՆ-ի պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերը նստաշրջանի ավարտից հետո լրագրողներին հայտարարեց. «Գործակցություն հանուն խաղաղության» նախաձեռնությունը պաշտպանած երկրներից յուրաքանչյուրը մշակում է գործակցության իր սեփական ծրագիրը: Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ ՆԱՏՕ-ի համագործակցության ծրագրին, ապա այն պետք է արտացոլի իր նշանակալից ներուժը, չափերը, ռեսուրսները, լայն շահերն ու ռազմական հնարավորությունները: Մենք քննարկեցինք նաեւ ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի Դաշնության համագործակցությունը, որը կլրացնի Ռուսաստանի դերը «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրի իրագործման ասպարեզում: Ռուսաստանի հետ համագործակցությունն ու երկխոսությունը համաղաստասխանում են ոչ միայն ՆԱՏՕ-ի անդամներին, այլեւ այդ նախաձեռնության բոլոր մասնակիցների շահերին: Մենք ողջունեցինք պաշտպանության նախարար Պ. Գրաչովի վերջերս արած այն հայտարարությունը, որ Ռուսաստանը պատրաստ է գործակցության ծրագրին միանալ առանց նախնական պայմանների:

Գործակցության ծրագիրը համադրության վերածվում է իրողության: Նրան միանալու ցանկություն է հայտնել արդեն 20 երկիր: Ներկայիս նստաշրջանի կոմյունիկեում նշված փաստերի թվում հարկ է առանձնակի ուշադրություն նվիրել զորավարժությունների, որոնք նախկին հակառակորդներն անց են կացնում համատեղ: Դա վկայում է, որ Արեւելքի եւ Արեւմուտքի մրցակցությունն ու տարանջատումն այսուհետեւ պատկանում է անցյալին:

Պետքարտուղարը հաղորդեց, որ Ռուսաստանի հետ համագործակցության խնդիրները կլինեն Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդի նստաշրջանին մասնակցելու համար Ստամբուլ ժամանած Ռուսաստանի արտգործնախարար Ա. Կոզիրեւի հետ կայանալիք իր զրույցի գլխավոր նյութը:

ԲՈԼՈՐ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԱՐԴԿԱՆՑ

Եթե դուք դեռ չեք կողմնորոշվել, թե որտեղ տեղադրեք Ձեր կազմակերպության (ֆիրմայի) գովազդը, ապա հիշե՛ք

- Մետրոպոլիտենից Երեւանում օրական օգտվում է **250000** մարդ
- Ձեր գովազդը մետրոպոլիտենի տարածքում կտեսնի օրական **58000** մարդ
- Այն կհետաքրքրի **37000** մարդու
- Դրանցից առնվազն **1500**-ը կշտապեն օգտվել Ձեր ծառայություններից:

Շտապե՛ք, մետրոպոլիտենի տարածքը մեծ է, բայց ո՛չ անսահման, իսկ գովազդի տեղադրման լավագույն կետերը շուտով ամբողջովին կզբաղեցվեն:

Հիշե՛ք. Ձեր գովազդը նախապատրաստելու և տեղադրելու համար Դուք անհամեմատ ավելի քիչ կվճարեք, քան վճարել ենք մենք այս հրավերը տպագրելու համար:

Զանգահարե՛ք 22-96-54, 27-69-08 և Ձեզ մոտ կգա մեր գործակալը:

Մեր հասցեն՝ Մարշալ Բաղրամյան պող. 76 (Մետրոպոլիտենի վարչության շենք):

ՄԵՏՐՈ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՀՈՍՔԻԿՈՍ

Եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի

Խաղաղությունը, ինչպես եւ յուսաբացը, անեղծության կգա: Ամենասարսափելի ամոթողից հետո էլ սեւ երկնքում ծվալվում են չարաղեռ ամպեր, եւ երկնքի կապույտ բացվածքի վրա հայտնվում է ծիածանը: Կյանքը գույց տվեց, որ մենք կարողանում ենք կռվել, կարողանում ենք պաշտպանել մեր հողը, կարողանում ենք զենքը ձեռքիս տպասել խաղաղության: Վեց դար եւ վեց տարի մենք տպասել ենք խաղաղության, որը հիմա, համոզված եմ, հեռու չէ:

Եւ այնուամենայնիվ, սիրտս լիքվին հանգիստ չէ: Ես շատ լավ գիտեմ եւ մեր պատմությունը, եւ մեր մարդկանց: Գիտեմ նաեւ, թե ինչպիսի վախճան ունեցավ մեր պատմության եւ մեր մարդկանց համար խաղաղության գալուստը, որին չէիք նախապատրաստվել: Ոգեշնչված մարտական սխրանքներով, կուրացած մասնավոր տակտիկական հաղթանակների երանավետությամբ, տառապելով հիվանդագին պատվախնդրությամբ ու շողոքորթության դեմ ձեռք մեքիքներ հասկանալ խաղաղ ժամանակ զրպվեցին ինքնակերությամբ, կերան մեկը մյուսին: Առյուծներ մենք կորցրինք միասնությունն ու անդուլ համբերությունը, ազգային ոգին: Սրանք են այն բոլոր թեղերը, որոնցով հյուսվում է հայրենասեր կտավը: Սրանք են այն բոլոր զույները ծիածանի, որով ավելտվում է ամոթողի ավարտը:

Ես համաձայն եմ Անդրեյ Պլատոնովի այն հայտնության գաղափարին, թե «ժողովուրդն առանց ինձ անկատար է»: Այստեղից է գալիս յուրաքանչյուր անհատի հանդեպ հարգանքի տրամաբանությունը: Այստեղից է գալիս նաեւ առանձին անհատի ընդգծման վտանգավորությունը, հատկապես այն ժամանակ, երբ խումբ վերաբերում է հայրենական պատերազմին, ժողովրդական պատերազմին: Միաժամանակ մեզ կվերցնենք ձեր հոգու վրա, եթե նվազեցնենք զորավարների, առանձին հերոսների ու անձնվեր գործիչների սխրանքները: Խաղաղության գալուստը պարտադրեց հոգ է ստեղծում զորավարների ու քաղաքագետների դասավորության ծլարձակման համար: Ջորականը դժվարությամբ է ընտելանում աբխարհիկ կյանքի անցուդարձին, աբխարհիկ կենցաղին: Ընտելացած լինելով արյան ու մահվան, արհամարհելով մահը, իր մեջ զգալով յուրահատուկ ուժ, երբ զենք ունի ձեռին Կամ բարձի տակ:

Ու այդ ժամանակ բավական է նույնիսկ փոքրիկ վիրավորանքը ամեն ինչը: Եւ հողը, եւ հայրերի գերեզմանները, եւ անասունը, եւ սարերը, եւ երկինքը: Կորցրինք հայրենիքը:

Այսպիսի արտահայտություն կա. «Եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի»: Դեռեւս հին իմաստուններն են հասատել այդ բանը. «Մի վիս պացեմ պարս բելլում»: Եւ այդ բանաձեւը մենք վաս չեմք յուրացրել Ղարաբաղում: Բայց մեղալի մյուս երեսն էլ կա: Պարզվում է, շատ լրջորեն պետք է նախապատրաստվել խաղաղությանը: Քաղցրն էլ է հանգեցնում սարսափելի, երբեմն անբուժելի հիվանդության: Մեր մեքիքներից շատերի կյանքն է դա հաստատում: Տառապելով քաղաքական շարախտով, նրանք եւ իրենց, եւ հայրենիքը հասցրին կոմայի վիճակի: Եւ ժամանակ եղավ, որ մեքիքներից ոմանք սկսեցին կռվել մյուսների դեմ: Բայց չէ որ նրանցից յուրաքանչյուրի հետեւից մարդիկ էին գնում եւ ամբողջ գյուղեր, որոնցում բնակվում էր ժողովրդի մի մասը: Այսինքն՝ բոլորը կռվում էին բոլորի դեմ: Բայց չէ որ այդ բանաձեւն էլ հին է, ինչպես աբխարհը: Քրիստոսի ծննդից շատ առաջ իմաստունները նախազգուշացնում էին, թե աբխարհի երեսին գոյություն ունի մի պատերազմ, որն ամենավտանգավորն է. «Բելլում օմնիում կանորա օմնես»-«Բոլորի պատերազմը՝ ընդդեմ բոլորի»: Ասես ինչ-որ ժանապախի բանաձեւ լինի:

Այո, հարկավոր է նախապատրաստվել ոչ միայն պատերազմին: Հաղթանակի երանավետությունը դոպինգի դեմ խրանում է սեփական անձի պատճառնմամբ: Եւ նման դեպքերում միշտ գտնվում են հենց այդ ֆենանցի չար դեւերը, որոնք ասեղը ձեռքերին մի գլուխ սրսկում են նոր-նոր մեքիքներին: Ու այդ ժամանակ մեքիքն ինքն իրեն հավատալով սեփական հանճարեղությանն ու անսխալականությանը համոզվում է, որ առանց իրեն հաղթանակը գլուխ չէր գա: Արդեն նշանակություն չունեն հերոսների սխրանքները, հայրենի հողի վրա հայրենիքի զավակների բափած առատ արյունը, բժիշկների ու քաղաքագետների անվնաս աշխատանքը, եկեղեցու եւ մայրերի օրհնանքը, ժողովրդի միասնությունն ու անդուլ համբերությունը, ազգային ոգին: Սրանք են այն բոլոր թեղերը, որոնցով հյուսվում է հայրենական կտավը: Սրանք են այն բոլոր գույները ծիածանի, որով ավելտվում է ամոթողի ավարտը:

Ես համաձայն եմ Անդրեյ Պլատոնովի այն հայտնության գաղափարին, թե «ժողովուրդն առանց ինձ անկատար է»: Այստեղից է գալիս յուրաքանչյուր անհատի հանդեպ հարգանքի տրամաբանությունը: Այստեղից է գալիս նաեւ առանձին անհատի ընդգծման վտանգավորությունը, հատկապես այն ժամանակ, երբ խումբ վերաբերում է հայրենական պատերազմին, ժողովրդական պատերազմին: Միաժամանակ մեզ կվերցնենք ձեր հոգու վրա, եթե նվազեցնենք զորավարների, առանձին հերոսների ու անձնվեր գործիչների սխրանքները: Խաղաղության գալուստը պարտադրեց հոգ է ստեղծում զորավարների ու քաղաքագետների դասավորության ծլարձակման համար: Ջորականը դժվարությամբ է ընտելանում աբխարհիկ կյանքի անցուդարձին, աբխարհիկ կենցաղին: Ընտելացած լինելով արյան ու մահվան, արհամարհելով մահը, իր մեջ զգալով յուրահատուկ ուժ, երբ զենք ունի ձեռին Կամ բարձի տակ:

Ու այդ ժամանակ բավական է նույնիսկ փոքրիկ վիրավորանքը

«Վեսին» հաղորդեց, թե Իվանովո քաղաքից մոտ երկու հարյուր վարձկաններ մեկնեցին Բաքու՝ կռվելու հայերի դեմ դարաբաղյան ճակատում: Հաղորդեց նաեւ գումարը՝ ամսական 500 հազարանոց ռուբլի: Այդ մասին ասաց Իվանովոյի զինկոմն ինքը, հարցականորեն տարածելով ձեռները. իբր, ի՞նչ

էջեր դարաբաղյան իրադարձությունների եւ խոհերի գրքից

Հարազատ հողի վերքերն անցնում են իմ արտի միջով

ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ձգանը քաշելու համար:

Ես վերուծության եմ ենթարկել Ղարաբաղում տեղի ունեցած բոլոր պատահական ու ոչ պատահական տպանությունների դեղերը: Իրականում դրանք բոլորը տեղի են ունեցել խաղաղ պահերին, զինադադարի ժամանակ: Չարագուշակ վերջաբան ծնում է մաֆիա, որն էլ իր հերթին ծնում է տեռոր: Եւ բոլորի կողմից սկսած պատերազմը դառնում է պատերազմ բոլորի դեմ:

Տա Աստված, որ ես սխալ լինեմ աղեղը կանխատեսելու փորձիս մեջ: Բայց եթե, այնուամենայնիվ, դժբախտությունը գա, պատրաստ եմ սեփական ձեռքս կտրելու, պատրաստ եմ տառապած սիրտս հանելու իմ կրծքավանդակից, միայն թե դա օգնի բոնել այն ձեռքը, որի մեջ գտնվում է մեքիքականության կացինը:

Իմ գրասեղանին աղակի է դրված: Դա գրադահարանիս աղակն դռնակն է, որ ընկել ու չի կոտրվել: Դրա տակ լուսանկարներ եմ դնում, զանազան բրթեր, որոնք կարող են առաջիկայում պետք գալ:

Այդ աղակին միշտ խանգարում է ինձ: Հանկարծակի դիպչելուց շարժվում է սեղանի վրա: Թղթերը դուրս են գրձնում տակից: Անընդհատ մտածում էի, թե ուր որ է դեն եմ նետելու: Բայց մի անգամ մի փասաբուղթ բերեցին, որը անմիջապես տեղադրեցի այդ աղակու տակ: Ու այդ պահից ի վեր հաստվեցի այն մտքի հետ, որ աղակին ընդմիշտ պիտի մնա սեղանիս վրա: Այլապես վախենում եմ կորցնել այդ փասաբուղթը: Դա ընդամենը մեծենագիր մի էջ է: Բայց՝ Վերեւում գրված է. «Ադրբեջանական Հանրապետություն», կողքին՝ «Պաշտպանության նախարարություն», հիշ ներքեւում «Բաքու, Աբարբեկովի պողոտա, 3»: Ավելի ներքեւում «25 հուլիս, 1993 թ.»: Այնուհետեւ գալիս է. «Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարությանը. Բանակի գլխավոր հրամանատար պարոն Ս. Բաբայանին»:

Կատարվեց: Կարելի է, ինչպես ասում են, գնալ հանգստանալու: Չէ որ սա սովորական նամակ չէ: Սա Լեռնային Ղարաբաղի անկախ պետության ընդունումն է: Չէ որ պաշտպանության նախարարությունն միայն պետությունն է ունենում, եւ բանակն էլ միայն պետությունն է ունենում: Բանակ, որ ունի «պարոն Գլխավոր Հրամանատար»: Ինչ վերաբերում է բուն տեքստին, արդա դա արդեն մանրամասն է: Թեեւ երբ լավ մտածելու լինես, այնքան էլ մանրամասն չէ. «Եռվու կողմերի համանման պատասխանատվության դեպքում խոստանում ենք երեք օր ժամկետով, որի ընթացքում կարող ենք պայմանավորվել Այրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հանդիպման մասին. դադարեցնել ամեն տիպի հարձակողական գործողություններ, հրթռային, հրետանային հրետակոծություններ, օդային ռմբակոծություններ», ներքեւում ստորագրված է. «Պաշտպանության նախարարի պաշտոնակատար Ա. Ս. Արիեւ»: Զարմում եմ գայթակղությունս, որդեգի չշարունակեմ մեկնաբանել այս պատմական փաստաթուղթը:

Ամեն ինչ: Եւ հողը, եւ հայրերի գերեզմանները, եւ անասունը, եւ սարերը, եւ երկինքը: Կորցրինք հայրենիքը:

Այսպիսի արտահայտություն կա. «Եթե խաղաղություն ես ուզում, պատրաստվիր պատերազմի»: Դեռեւս հին իմաստուններն են հասատել այդ բանը. «Մի վիս պացեմ պարս բելլում»: Եւ այդ բանաձեւը մենք վաս չեմք յուրացրել Ղարաբաղում: Բայց մեղալի մյուս երեսն էլ կա: Պարզվում է, շատ լրջորեն պետք է նախապատրաստվել խաղաղությանը: Քաղցրն էլ է հանգեցնում սարսափելի, երբեմն անբուժելի հիվանդության: Մեր մեքիքներից շատերի կյանքն է դա հաստատում: Տառապելով քաղաքական շարախտով, նրանք եւ իրենց, եւ հայրենիքը հասցրին կոմայի վիճակի: Եւ ժամանակ եղավ, որ մեքիքներից ոմանք սկսեցին կռվել մյուսների դեմ: Բայց չէ որ նրանցից յուրաքանչյուրի հետեւից մարդիկ էին գնում եւ ամբողջ գյուղեր, որոնցում բնակվում էր ժողովրդի մի մասը: Այսինքն՝ բոլորը կռվում էին բոլորի դեմ: Բայց չէ որ այդ բանաձեւն էլ հին է, ինչպես աբխարհը: Քրիստոսի ծննդից շատ առաջ իմաստունները նախազգուշացնում էին, թե աբխարհի երեսին գոյություն ունի մի պատերազմ, որն ամենավտանգավորն է. «Բելլում օմնիում կանորա օմնես»-«Բոլորի պատերազմը՝ ընդդեմ բոլորի»: Ասես ինչ-որ ժանապախի բանաձեւ լինի:

Այո, հարկավոր է նախապատրաստվել ոչ միայն պատերազմին: Հաղթանակի երանավետությունը դոպինգի դեմ խրանում է սեփական անձի պատճառնմամբ: Եւ նման դեպքերում միշտ գտնվում են հենց այդ ֆենանցի չար դեւերը, որոնք ասեղը ձեռքերին մի գլուխ սրսկում են նոր-նոր մեքիքներին: Ու այդ ժամանակ մեքիքն ինքն իրեն հավատալով սեփական հանճարեղությանն ու անսխալականությանը համոզվում է, որ առանց իրեն հաղթանակը գլուխ չէր գա: Արդեն նշանակություն չունեն հերոսների սխրանքները, հայրենի հողի վրա հայրենիքի զավակների բափած առատ արյունը, բժիշկների ու քաղաքագետների անվնաս աշխատանքը, եկեղեցու եւ մայրերի օրհնանքը, ժողովրդի

Կարդացեք՝ 21, 25, 28 մայիս, 1, 4, 8 հունիս

կարող ես անել, տակայական ազատ հարաբերություններ են:

Ահա այդպես, իրենց դարավոր եղբայրությամբ հղարացող եղբայրական ժողովուրդներն այսօր, մտնելով տակայական ազատ հարաբերությունների մեջ, որուակի վարձի դիմաց, «օրենքի» հիման վրա, տպանում են եղբայրներին ու քույրերին: Այստեղ ինչպե՞ս չհիշես մեծ Շիրազին, որը մի անգամ ասաց. «Ժողովուրդների բարեկամությունը միայն այն դեպքում բարեկամություն կլինի, եթե ժողովուրդներն իրենք իրենց զգան ծիածանի գույների վիճակում»: Դարձյալ ծանոթ պատկեր է: Ծիածան: Գույների ինչպիսի՞ հավասարության մասին կարող է խոսք լինել, եթե բարերն իրենց դպրոցականների համար հարդարակում են քարեզ, որտեղ գրքի ամբողջ ծիածանը միայն կանաչ է ներկված:

Երեք շաբաթ անց Ստեփանակերտում ինձ հաջողվեց հաղորդում լսել ռուսական ռադիոյով: Դարձյալ Իվանովոյից մեկնած այդ նույն տղաների մասին: Հարցազրույցին պատասխանում էր Աֆղանստան մեկնած նախկին զինվորներից մեկը, որ հրաշքով էր կենդանի մնացել Ղարաբաղյան ճակատում. «Բնամոս չեմ ցանկանում աղրել այն, ինչ որ մենք աղրեցինք: Նախ մեզ կողոպտեցին պետական մակարդակով անմիջապես Բաքու մեկնելուց հետո: Խոստացած գումարի նույնիսկ կեսը չտվին: Ասացին, հետո կտան, բայց հետո էլ չտվին: Երկրորդ ռազմաճակատն այնտեղ բոլորովին նման չէ Աֆղանստանին: Այնտեղ երբեք չես իմանա, թե որտեղից է կրակում բնամին: Տառապիորեն՝ չորս կողմից: Չէ, դա Աֆղանստան չէ: Դա Ղարաբաղն է: Մենք տասնյոր դազաղ բերեցինք, չհաշված տասնյակներով վիրավորներին: Մնում է խոստովանել, թե դա ինչպես սկսվեց: Մեր հայրենակիցներից մեկը, պատմանավորվելով ազերիների հետ, խաբեց մեզ, փասաբղթերը ձեւակերտեց զինկոմխարհասի միջոցով: Ավելին, հավատացրեց, թե կռվելու ենք եկվոր ավազակների դեմ»:

Երիտասարդը մեղադրում էր իրեն կարճատեսության մեջ: Տասնյոր մահ եւ տասնյակներով հաշմանդամներ: Այդպիսին է հատուցումը...

Շարունակելի

ԱՆԳՐԱԴԱՐՁ

Երբ ՀՀՇ նախագահն այլամերժ է եւ ՀՀ արտգործնախարարն այլատեաց...

Ինչպես յայտնի է, մայիսի 20-22-ը Հայաստանի Երգչախմբային ընկերությանն դահլիճում տեղի ունեցավ ԱԻՄ-Քրիստոնեավարներ (արդարեւ, Պարոյր Հայրիկեանի կազմակերպությունը ցնոր տնօրինությունն կոչում է նաեւ «Քրիստոնեավար», ըստ երեւոյթին չբաւարարուելով Ազատ Արշակեանի Քրիստոնեայ դեմոկրատական միութեան հրատարակեալ ընթացքից) կուսակցության 13-րդ խորհրդաժողով համագումարը, որի ընթացքում ելույթ ունեցան նաեւ հրաւիրուած կազմակերպությունների ներկայացուցիչներից ոմանք: Նրանց բում՝ Հայոց համազգային շարժման կարկառուն ներկայացուցիչներ՝ ՀՀՇ վարչության նախագահ Տեր Յուսիկ Լազարեանը եւ նոյն վարչության «հայրս» անդամ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վահան Փափազեանը:

Եւ քանի որ այս յօդուածի նպատակը չէ այդ խորհրդաժողով համագումարի լուսաբանումը, այլ առանձնացումը վերոյիշեալ այրերի խօսքերում կրկնուող եւ, ըստ էության, համակարգուած՝ ըստ ինձ վտանգաւոր մի մտքի, ուզում եմ օգտուել ԱԻՄ-Քի պաշտօնաթերթ «Անկախություն» շաբաթաթերթի 1994 մայիսի 28-ի եւ յունիսի 2-ի համարներից, որտեղ լոյս են տեսել այդ ելոյթները:

Կուսակցական այդ զոյգ ղեկավարներից առաջինը ելույթ է ունեցել Տեր Յուսիկ Լազարեանը, որ հիւրընկալ կազմակերպությանը աւուր պատշաճի գովելուց յետոյ, թէ «Ազգային ինքնորոշում միավորումը, որպես Ազգային միացեալ կուսակցության ժառանգորդ, ամենադժվարին ու անազատ ժամանակներում իրեն նվիրաբերեց ժողովրդի ամենասուրբ՝ ազատության, անկախ պետականության ստեղծման նպատակներին եւ նվիրումով ու հետեւողականորեն պայքարեց դրանց իրագործման համար», բարեհաճել է նաեւ անդրադառնալ «մեր ազգային-ազատագրական պայքարի պատմության», որպէսզի փորձի ԱԻՄ-Քին հակադրելով միւսներին հատատել, թէ մեր «ազգային բարձր գաղափարներ որդեգրած կուսակցությունները՝ թ՝ ամենականներն ու հնյակները, թ՝ դաշնակցությունն ու կոմունիստական կուսակցությունը ոչ միայն չհասան իրենց նպատակին, ինքնավստահ ընտրով պատգամում է՝ «...քանզի նշածս կուսակցություններից եւ ոչ մեկը հայրենի հողի ծնունդ չէին, ստեղծվել ու գործում էին դրսում: Հաճախ օտար, մեր ազգային էությանն անհարիր գաղափարախոսությունների թելադրանքով»:

Հասկացա՞ք: Դու՝ Մկրտիչ Խրիմեան Հայրիկ, դու՝ Մկրտիչ Փորքուգալեան եւ դու՝ Մկրտիչ Աւետիսեան, որ Վանում ծնունդ տուեցիք Վարժարեանցոցին ու Ամենական կուսակցությանը, հասկացա՞ք վերջապես, թէ Վանը հայրենի հող չէ եւ կամ ոչիցս են ասում բարի պատմաբանները, որ դում, ինչպես ձեր յեղնորդները, դրսից գալով, առազգային, օտար գաղափարախօսություններ բերելով աղտի մատնեցիք արեւմտահայությանը, որ հանգիստ ու առատով ապրում էր Օսմանեան տիրապետության տակ: Մինչդեռ տեսէ՛ք, Տեր Հայրը ձեզ ցոյց է տալիս, Ազգային ինքնորոշում միաւորումը, որ «Հայրենիքում, այս հողի վրա ստեղծված, ժողովրդի իղձերից ծնված, նրա հոգս ու ցաւով ապրող, իրատես քաղաքականության, ազանդական գաղափարախոսությունը մերժող կուսակցություն է»: Դու՛ք, ազանդապաշտ ստրկամիտներ, օտարամիտներ, ի մաղ՛ք՝, «ԱԻՄ-ը մերժում է ստրկամտությունը, անպայմանորեն որեւէ օտարի ապավինելու կործանարար գաղափարախոսությունը»: ԱԻՄ-ը, ինչպես եւ ՀՀՇ-ն, «մերժել ու մերժում են(ք) ստրուկների կազմակերպություն ու գոմբիների հասարակություն ստեղծելու արտաքին գաղափարն ու գործելակերպը»:

Այնուհետեւ ելույթ է ունեցել ինքը՝ ՀՀ արտգործնախարար Վահան Փափազեանը, որ հենց սկզբից, ինչպես ընդունուած է իր պատկանած կուսակցության եւ ղեկավարած գերատեսչության մեջ՝ ընթացքից դրելով այն տպաւորությունը, «որ Հայաստանի իշխանությունները, ի մասնաւորի նաեւ արտաքին գործերի նախարարը հակահիմական կեցվածք ունեն» եւ, «ամեն կերպ աշխատում են հեռացնել նրան քաղաքական ասպարեզից», հայտարարում է՝ «Դա այդպես չէ»: Ու թէեւ ոչինչ չի խոսանում ԱԻՄ-Քին, սակայն լոելեայն, ինչպես ասում են՝ «կասկածելու եւ ակնկալելու իրաւունքը» զիջում է Պ. Հայրիկեանի հեռեւորդներին, փաղաքելով նրանց գլուխը, նրանց հակադրելով այն միւս՝ չար, անյուսալի երեխաներին: «Անձամբ ես, ասում է նա, որոշակի տարբերություն եմ դնում ընդդիմության տարբեր ձեւերի մեջ»: Ուրեմն՝ չի բացատրում, որ «տարբեր ձեւեր» ասելով ինքը նկատի ունի «տարբեր հողի ծնունդները», սակայն ներկաների համար շուտով դարձ է դառնում ամեն բան: «Էականն այն է, ասում է նա, որ այն քաղաքական ուժերը, կազմակերպությունները, որոնք ածել են այս հողի վրա, այսօրվա իշխանությունների հետ կարող են համագործակցության եզրեր գտնել»: Նշանակում է՝ այն միւսները, որոնք չեն ածել «այս հողի վրա», որոնց հազարաւոր անդամները կարծէք դրսից են եկել, ինչ էլ անեն չեն կարող, բող յոյս չունենա՛ն, «այսօրվա իշխանությունների հետ... համագործակցության եզրեր գտնելու»: Չեն կարող, քանզի դրն նախարարը «էական տարբերություն» է տեսնում «այս կազմակերպությունների եւ նրանց բվում առաջին հերթին Ազգային ինքնորոշում միավորման եւ այն կազմակերպությունների կամ կուսակցությունների միջեւ, որոնք ներս են բերվել դրսից»: (Գոնէ իրենց կամով կամ միջոցներով գային, եւ ոչ թէ ուրիշների ձեռքով բերուին, մտցուին դրսից, մասնաւորապես ադրանի ոչխ...): Ադա, առաւել լրջանալով, հայկական դիւանագիտության պեսը դիւանագիտորեն յոյս է յայտնում, «որ կստացվի համագործակցություն իշխանությունների եւ այս կազմակերպությունների միջեւ», սակայն իսկոյն, վախենալով, որ յանկարծ շատ կ՝ոգեւորուեմ, աւելացնում է. «Սակայն շատ դժվար է համագործակցության ձեւեր գտնել այն քաղաքական կազմակերպությունների հետ, որոնք հայաստանաբույս չեն»:

Եւ այսպէս, եւս առաւել նեղացնելով համագործակցության հնարաւորությունների ծիրը, ՀՀ արտգործնախարարը, յանկարծ կարկինը լայն բացելով, ներկայացնում է իր խո՛ր մտահոգությունները: «Դա շատ լուրջ խնդիր է, ասում է նա, որը գալիս հանգում է հայրենիք-փյուռք հարաբերությունների խնդրին» (արդեո՞ք «Հայաստան» հանրապետական հիմնադրամը նկատի ունի), «այլ երկրներում գործող հայկական կազմակերպությունների այլեւայլ ազդեցությունների տակ գտնվելու խնդրին» (տեսնես՝ ո՞ր երկրի գաղտնի ծառայությունը նկատի ունի), «Հայաստանի՝ որպես անկախ պետության գոյության խնդրին» (տեսա՞ք, թէ ուր հասցուց հարցը՝ այդ դրսի կազմակերպությունները բոլորն էլ սպառնում են Հայաստանի անկախությանը, նրանց համար անընդունելի, անմարսելի, վտանգաւոր բան է անկախ Հայաստանի գոյությունը):

Մեզ բում էր, որ գաղթական եղելան, դրսեցի լեռեցի, ախբար-տեղացի, տասնամեակներ շարունակ ոչ առանց նախկին վարչակարգի քաջալերանքի ժողովրդական մակարդակներում պահպանուած ազգային հակադրությունը, որի յարատեւությունը բում է կարեւոր նուաճումներից էր Ազատության հրապարակում ծնունդ առած Շարժման, այսպիսով, յանկարծ բարձրանում է պետական մակարդակի, բարեխղճաբար՝ արհեստականորեն: ՀՀ վարչության նախագահը դաս է տալիս, իսկ ՀՀ արտգործնախարարը գոլ է խփում: Սակայն, որպէսզի իմ այս տխուր եզրակացությունն էլ չդիտուի իբրեւ դրսից ներմուծուած, պարտք եմ համարում մէջբերել նոյն համագումարում արտաքին քաղաքականության վերաբերեալ ԱԻՄ-Քի ընդունած Յայտարարությունից:

«Քաղաքական փորձառություն չունեցող Հայաստանի ներկայիս իշխանությունները արտաքին քաղաքականությունը ծեւավորեցին սխալ հիմքերի վրա: Այդ քաղաքականության բնորոշ գծերն են՝ պատեհապաշտությունը, պատմականորեն իրեն չարդարացրած միակողմանի կողմնորոշման վտանգավոր ավանդույթի շարունակությունը, իրական, լիարժեք անկախ պետության կերտման համար անհրաժեշտ արտաքին քաղաքական գործընթացների բացակայությունը: Հայաստանի արտաքին քաղաքականության պատասխանատուները հարեւան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը հնարավոր համարեցին ցեղասպանության հետեւանքով տեղի ունեցած անարդարությունները եւ պատմական ճշմարտությունը մոռացության մատնելու ճանապարհով»:

ՅԱԿՈԲ ԱՌԵՏԻՔԵՆ

digitised by A.R.A.R@

ԱՀԿ

Միջազգային

ՏԿՅԱԼՆԵՐ

Եւրոպական հասարակությունը վիճակագրության մաղի միջով

Դանիացիներն ամուսնանում են շատ ուշ: Լյուքսեմբուրգցիներն ու իռլանդացիները շատ հաճախ են լինում հոգեբուժական հիվանդանոցներում: Պորտուգալացի վարորդներն ամենավտանգավորն են Եւրոպայում: Եւրոպական միության երկրների վերաբերյալ այս վիճակագրական տվյալները քաղված են Եւրոստատ ինստիտուտի մայիսի հրապարակումներից:

Եւրոպական միության վիճակագրական ինստիտուտը «Եւրոպական միության վիճակագրական դիմանկար. թվեր իրար ճանաչելու համար» վերնագրով գրքույկում հավաքել է եւրոպացիների կյանքի եւ մահվան ամենաարժեւոր հայեցակետերի մասին տվյալներ:

Կանանց կյանքի տեւողությունը ամենաբարձրն է Ֆրանսիայում (81,5 տարի), մինչդեռ տղամարդիկ ամենաերկար ապրում են Հունաստանում մինչեւ 74,6 տարի: Եւրոպական միության մասշտաբներով կյանքի տեւողությունը տղամարդկանց համար 73,6 տարի է, կանանց համար՝ 80 տարի:

Դանիայում առաջին ամուսնության միջին տարիքը բավական բարձր է (30,5 տարեկան՝ տղամարդկանց համար եւ 28 տարեկան՝ կանանց համար), իսկ բրիտանացիներն ամուսնանում են շատ երիտասարդ (25,5 տղամարդիկ, 23,9 կանայք):

Դանիայում երեխաների 46,4 տոկոսը ծնվում է ամուսնությունից դուրս: Եւրոպական միության միջինը արտամուսնական երեխաների համար 19,5 տոկոս է: Ֆրանսիայում այդ կտրվածքի ծնունդները կազմում են 31,8 տոկոս. Միացյալ Թագավորությունում՝ 30,8 տոկոս: Այս թվերը շատ ավելի ցածր են Գերմանիայում՝ (15,4 տոկոս), Բելգիայում (11,6 տոկոս), Իտալիայում (6,8 տոկոս) եւ Հունաստանում (2,6 տոկոս):

Եւրոպական միության բնակիչներն իրենց տրամադրության տակ ունեն 2 [illegible]միավոր եւ 0,5 ատամնաբույժ հազար բնակչի համար: Բժիշկների քանակը շատ մեծ է Հունաստանում՝ 4,3 հազար բնակչի համար: Պորտուգալացիների գործը դժվար է ատամների հիգիենայի տեսակետից, քանի որ նրանք ընդամենը 0,1 ատամնաբույժ ունեն հազար բնակչի համար: Դանիացիների ու հույների վիճակն ամենաարվոն է՝ 1 ատամնաբույժ հազար բնակչի համար:

Իռլանդացիներն ու լյուքսեմբուրգցիները խիստ անհանգստացած են իրենց հոգեկան առողջությամբ եւ հազար բնակչի համար ունեն համապատասխանաբար 2,7 եւ 2,4 հոգեբուժական հիվանդանոցային տեղեր:

Պորտուգալիայում (հազարից 9,3-ը) եւ Լյուքսեմբուրգում (հազարից 8,7-ը) գրանցված է մանկական մահացության ամենաբարձր ասիճանը: Գերմանական եւ հոլանդական ծննդատներ նորածինների հարաբերությամբ ամենաառատիվն են հատկացնում հազարից 6,2 եւ 6,3 մահացության դեպքերով:

Եւրոստատը հրապարակում է նաեւ Եւրոպացի վարորդների որակական գնահատականը: Պորտուգալացիներն ամենաանբարեխիղճ վարորդներն են. 10000 բնակչից 2,68-ը տարեկան զոհվում է ճանապարհներին: Այս թվերը բարձր են նաեւ Լյուքսեմբուրգում (2,13), Բելգիայում (1,88) եւ Ֆրանսիայում (1,69):

Չնայած այս ամենին եւ ծնելիության բավական ցածր ասիճանին (1,14 տոկոս) ենթադրվում է, որ Եւրոպական միության 12 երկրների բնակչությունը, որն այսօր կազմում է 347 միլիոն մարդ, մինչեւ 2020 թվականը կաճի 6 տոկոսով:

Ֆրանսիական դեսպանատան թիվ 15 տեղեկագրից

ՕՐԻՐ

Ռուսաստանը Պինոչեթի վերջին հույսն է

Քաղաքացիական հագուստով եւ ուրիշի անվամբ Ամստերդամ ժամանած նախկին «արյունալի բռնապետ», Չիլիի նախագահ, իսկ այժմ երկրի ցամաքային զորքերի հրամանատար Աուգուստո Պինոչետը այնուամենայնիվ ճանաչվեց եւ վռնդվեց հյուրանոցից նրա անվտանգությունը ապահովելու «անհնարինության» պատվակով: Հետաքրքրական է, որ գեներալը եւրոպական ուղեւորությունը չընդհատեց եւ այժմ մտադիր է այցելել Չեխիա, Սլովակիա, իսկ այնուհետեւ նաեւ Ռուսաստան: Թեպետ Մոսկվա, ինչպես հայտարարեցին Ռուսաստանի ԱԳՆ-ում, նրան «պաշտոնապես ոչ ոք չի հրավիրել»:

Հոլանդիայի արտգործնախարարությունում հայտնեցին, որ կառավարությունը ոչ միայն չի հրավիրել Պինոչետին, այլ նույնիսկ տեղյակ չէր նրա այցի մասին: Իսկ տեղեկատվության զանգվածային տեղական միջոցները հայտնեցին, որ այցը նախաձեռնվել է «սպառազինման կամուրջներ գցելու» նպատակով: Այդ անհաջող առաքելությունից հետո, Պինոչետը Սանտյագոյից, արդեն բացեիբաց, երեքօրյա այցով մեկնում է Պրահա, ուր նրան հրավիրել է նախկինում պետական, իսկ այժմ մասնավոր Omnipol ընկերությունը, որը մասնագիտացված է հենց սպառազինման արտահանմամբ: Գեներալին ուղեկցում է 30 զինվորականներից եւ բիզնեսմեններից բաղկացած պատվիրակությունը:

Ինչպես հայտնի է, «սոցիալիստական համագործակցությունում» եւ ԽՍՀՄ-ում «Պինոչետ» բառը կապակցվում էր «մարդասպան եւ դահիճ» հասկացություններին: Իսկ Ռուսաստանում այժմ ավելի հազվադեպ են հիշում գենդակահարված (կամ իրեն գենդակահարած) ժողովրդավարական ձեւով ընտրված նախագահ Սալվադոր Ալիենդեի, առավել եւս Մոսկվայում աղաղակող գտած (այնուհետեւ ԳԴՀ-ում) կոմունիստ Լուիս Կորվալանի մասին: Այժմ Պինոչետին կոչնում են «տնտեսական բարեփոխումների հայր» տիտղոսը: Նախկին բռնապետին տին Պավել Գրաչովը չի հրավիրել: Գեներալը գալիս է Ռուսաստան, որպես մասնավոր անձ, Ուրալ՝ սպառազինումներ տեսնելու: Միգուցե ինչ-որ բան գնի: Իսկ նա շատ է ցանկանում հայացք գցել Ռուսաստանին: Չէ որ իր հայրենիքում Պինոչետը այնքան վառող ծախսեց կոմունիզմի ոչնչացման համար: Իսկ ոմանք իրենց բռնամին ինքը փլուզվեց՝ առանց մի կրակոցի:



Պինոչետին անհանգստացնում է նաեւ մի այլ բան. չիլիացիները նրանից մի ինչ հոգնել են: Հասարակական կարծիքի վերջին հարցման համաձայն, Չիլիի բնակչության 70 տոկոսը այնքան էլ չի տիրի, եթե վիճերանը անցնի հանգստի: Եւ Ռուսաստանը այստեղ փրկություն է: Պինոչետը հուսով է, որ իր հաղթանակը Ռուսաստանում կարձագանքի Չիլիում: Այն ժամանակ չիլիացիները կհասկանան եւ կասեն. «Մի հեռացի, գեներալ: Դու մեզ դեռ պետք ես»:

Նախկին բռնապետը Ռուսաստան ոտքի ժամանեց դեռ անցյալ տարվա հոկտեմբերին, սակայն նրա այցին խանգարեցին հոկտեմբերյան դրամատիկ իրադարձությունները: Տեղական բերքերից մեկին տրված հարցազրույցներից մեկում Պինոչետը համեստորեն ասաց. «Ռուսաստանում ինձ լավ են ճանաչում: Եւ մի հիշ խորհելով, ավելացրեց. ռուսների համար Պինոչետը Չիլին է, իսկ Չիլին Պինոչետն է»:

Արտասահմանյան մամուլից

ՀԱՄԱՌՈՏ

Սպառազինությունը վերստին կհասնի Հարավսլավիա

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 10 ՀՈՒՆԻՍ, ՓՍՍՏ. ԱՄՆ-ի ներկայացուցիչների տունը կողմ քվեարկեց նախկին Հարավսլավիա սպառազինությունների վաճառի վրա սահմանված էմբարգոն հանելուն: Ավելի վաղ նման որոշում էր կայացրել Սենատը: Կոնգրեսի երկու դահլիճներն էլ գտնում են, որ էմբարգոն նոր հասավորություն է ստեղծում բոսնիացի սերբերի համար: Միաժամանակ BBC-ն տեղեկացնում է, որ նախագահ Քլինթոնը զգուշացրել է Կոնգրեսին, որ նման միակողմանի որոշումով ԱՄՆ-ն կարող է պատակտում առաջացնել ՆԱՏՕ-ում, խոչընդոտել ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի բնականոն հարաբերությունների հաստատմանը եւ խորացնել պատերազմը նախկին Հարավսլավիայում:

Քննարկվում են փրկարար աշխատանքների խնդիրները

ՀԵԼՍԻՆԿԻ, 9 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ. Հունիսի 10-ին Ֆինլանդական Կուոոթիո քաղաքում բացվում է միջազգային ոչնոդողական, փրկարարական, խորհրդակցական միության Աֆրիկա-Եվրոպա խմբի երրորդային հանդիպում, որին մասնակցում է 33 արտակարգ իրավիճակների պետվարչության պատվիրակությունը: Հանդիպման հիմնական նպատակն է համակարգել տարբեր երկրների գործողությունները տեղական, երջանային ու միջազգային մակարդակներով տարերային աղետների դեմ մղվող պայքարում, ինչպես նաեւ ռեսուրսների կառավարումը արտակարգ իրավիճակներում: Միջոցառման հովանավորներն են ՄԱԿ-ի հումանիտար կառույցների վարչությունը եւ Ֆինլանդիայի կառավարությունը:

Իրանի նախագահը մեղադրում է ԱՄՆ-ին

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 9 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊՈՆ. Ինչպես հունիսի 8-ին հաղորդեց «Նյու Յորք թայմզ» թերթը, Իրանի նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին Միացյալ Նահանգներին մեղադրել է գաղտնի հավաստիացումների խախտման մեջ, այն է՝ ԱՄՆ-ում սառեցված իրանական ավանդները, եթե Իրանը համաձայնի միջնորդել Լիբանանում ամերիկացի պատանդներին ազատելու գործում: «Իրան-կոնտրաս» գործողության ժամանակներից ի վեր առաջին անգամ պաշտոնական Իրանի ղեկավարը հավաստել է, որ ամերիկա-իրանական համաձայնագիրը կնքվել է Լիբանանում արեւմուտքցի պատանդների ազատման նպատակով:

ԿՈՄԿՈՒՍ

Մոսկվան հզոր հովանավոր

Կոմունիզմի աղի իրավիճակը նրա անցյալն է: Լուգրոդ Վիկտոր Լուդանը եւ գիտաշխատող Պիեռ Լորանը Մոսկվայում ամիսներ շարունակ խորասուզվել էին ֆրանսիական քաղաքական կյանքի ամենափակ տարածներից մեկի՝ Ֆրանսիայի Կոմունիստական կուսակցությանը «տվեալական ընկերների» կողմից յոթ տասնամյակ ֆինանսավորելու հարցի բացահայտման մեջ: Արդյունքները շոկացուցիչ են: Այլեւս ո՞վ կարող է ժխտել, որ սկսած ստեղծումից՝ 19-20 թթ., մինչեւ իշխանության վերջը՝ օրերը Մոսկվայի «մեծ եղբայրները» հսկայական չափերով եւ պարբերաբար վարձ էին տալիս Ֆրանսկոմկուսին: Նախ՝ Լենինը եւ 3-րդ ինտերնացիոնալը, որոնք լիաձեռ հափշտակեցին ցարական կայսրության հարստությունները, որոնցից վճարեն պրոֆեսիոնալ հեղափոխականների «բանակին» աշխարհի բոլոր անկյուններում, ապա՝ Ստալինը, որ ԽԿ-ն դարձրեց Կրեմլի պարտադրյալ վարձկանը, եւ նույնիսկ Գորբաչովը, 1985-ից հետո, որ հատկապես լծվեց ամրապնդելու գործողությունների գաղտնիքը, որեսդրական էր պահանջում:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

Որքա՞ն «արժե» Եւրախորհրդարանի պատգամավորը

ՓԱՐԻԶ, 9 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ. Այս շաբաթ Եւրոպայի 12 երկրներում, Եւրամիության բարձրագույն օրենսդիր մարմնի ընտրությունների նախօրեին, հասկանալի պատճառներով այս հարցը զբաղեցնում է միլիոնավոր ընտրողների մտքերը:

Ի՞նչ կարող է ակնկալել հնգամյա ժամկետով ընտրվող Եւրախորհրդարանի պատգամավորը. նախեւառաջ, դիվանագիտական անձնագիր, ինչպես նաեւ ավտոմոբիլի հատուկ նշան, աղահովագրություն եւ պաշտոնաթողությունից հետո կենսաթոշակի հավելում: Իհարկե, նաեւ խորհրդարանական անձեռնմխելիություն:

Պատգամավորն ստանում է խորհրդարանական ռոճիկ: Այն կազմված է մի քանի մասից: Մի մասը վճարում է այն պետությունը, որտեղից ընտրված է պատգամավորը: Միջոցների զգալի մասը պատգամավորն ստանում է անմիջականորեն Եւրախորհրդարանի բյուջեից: Ամեն օր, իհարկե, «ներկայության» թղթի վրա ստորագրության առկայության պայմանով, պատգամավորները «մանր ծախսերի» համար ստանում են 1320 ֆրանկ: Եւրամիության երկրներում շրջագայելու ամենամյա վճարումները կազմում են 19 հազար ֆրանկ: Բացի դրանից, պատգամավորին ամեն ամիս 18 հազար ֆրանկ է հատկացվում իր գրասենյակի ծախսերի եւ 11 հազար լրատվական ծախսերի համար:

Վերջապես, յուրաքանչյուր պատգամավորի՝ ամեն ամիս եւս 50 հազար ֆրանկ է հատկացվում օգնականին վարձատրելու համար: Ոմանց, օրինակ, խորհրդարանական հանձնաժողովների նախագահների համար այդ օգնականներն իհարկե անհրաժեշտ են: Սակայն շատ պատգամավորներ նախընտրում են տնտեսել օգնականների հաշվին եւ գրպանել այդ դրամը: Ոմանք ծայրահեղ դեպքում դիմում են իրենց կանանց կամ զավակներին, որոնցից վերջիններս «ուժեղի համեմատ» օգնություն ցույց տան:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Զրոյ. հասարակական գործիչ, երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանը, ավարտելով Վիեննայի գեղարվեստների ակադեմիայի գրաֆիկայի բաժինը, 1924-ից աղրել ու ստեղծագործել է Կահիրեում, խմբագրել ոլորբերականներ: Նրա մոտ 40.000-ի հասնող երգիծական նկարները («Մարդկային կատակերգություն» եւ «Մենք մեր ակնոցներով» շարքերը) օժտված են գրոտեսկային մտածողությամբ, ողնկցվում են սուր եւ դիտուկ մակագրություններով: Հայ նկարչության մեջ նա շարունակեց Հակոբ Պարոնյանի եւ Երվանդ Օշյանի ավանդները: Եւ դատահակ չէ, որ իրեն ուսուցիչ երգիծական տաղանդով նկարազարդեց Հակոբ Պարոնյանի «Մեծատոհմիվ մուրացկաններն» ու Երվանդ Օշյանի «Ընկեր Թանգունին»: Ալեքսանդր Սարուխանը, երգիծանկարները խարսխված են տեղի արաբական գեղագիտական մտածողության, համաբարեհայիկ երգիծանկարչական արվեստի հաջողությունների վրա եւ առատորեն ժանրի հիմնադրումն ու զարգացումը Մեծամոր Արեւելքի երկրներում:

Ալեքսանդր Սարուխանը բազմաբնույթ արվեստագետ էր, Ռամկավար ազատական, կուսակցության կարկառուն անդամ, գաղթավայրի ցավոտ հարցերի մասին հոդվածներ էր գրում: Փորձեց նաեւ բատերախաղեր գրել: Գրեց նաեւ «Մենք հայերեն չենք գիտեր» (1963) կատակերգությունը: Վերջինիս առիթ թեւադրում է բատերգության գաղափարական բովանդակությունը. խաղենու այն ներին հիմնագոհությունը, երբ ազգայինը ժխտելով իբր հաղորդակից են դառնում եվրոպականին:

Բատերախաղն ունի հինգ գործողություն, որոնցում նույն գաղափարները շեշտող բազմաթիվ կերկնություններ կան: Բեմադրողը նկարիչ եւ ասմունող, անցյալում իր դերասանական ունակությունները հաս դրսեւորած Նորա Ազատյանը բատերախաղն ազատեց երկարաոլատում տեսարաններից, կենտրոնական դարձնելով միայն ու միայն հայոց լեզվի, հայոց դպրոցի ոգեղանման կարեւորությունը: Ներկայացումն ունեցավ անընդմեջ երկու տարի, որից շահեց բեմադրությունը: Ալեքսանդր Սարուխանի բատերախաղն ունի տեղի եւ ժամանակի դասական միասնություն եւ խարսխված է կերպարների տիպաժային բնութագրումների, սուր խոսքի ինտոնացիոն նրբությունների վրա: Ներկայացման մեջ դոգմատիկ դերասան չկա: Բեմադրողը, ելնելով դիտեսի տիպաժների էությունից, յուրաքանչյուրի համար արջաղաղից ընտրել է համապատասխան շնորհալի մարդ: Ներկայացումն ունի ակտիվ զարգացում, աշխույժ երկխոսություններ, խոսքի մաքրելի շեշտադրումներ. հայկական դպրոցի ամեն ինչը վատ է, չնայած չնչին վատ է, բայց բանկ է ինչ ինչի՞ համար են բարեռաներ Պողոս Նուբար փաշան եւ ... Ալեք Մանուկյանը, բող վճարեն): Որքա՞ն իմաստալից են անգլիացի հարեւանի մուտքից հետո տեղի ունեցող երեւույթները, երբ դարզվում է, որ օտարը ծանոթ է Բաֆֆու երկերին, գիտի Սիամանթոյին, Վահան Թեքեյանին: Իսկ Սասունցի Դավի՞թը: Իրենք գործ չունեն այդոլիսի մարդկանց հետ. գեղջուկի մենկ է, այն էլ սասունցի: Հայոց դպրոցի հոգաբարձուն իր երեխային օտար դպրոց է տվել միայն ու միայն հայ ազգի շահերից ելնելով. բարձր հաղաքարության հաղորդակից դարձնելու համար (լցրել էին Դեհրոյտի գբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու դահլիճը եւ ներկայացումից հետո երկար ժամանակ չէին հեռանում, շնորհավորելով դերակատարներին, բեմադրիչին, խմբի տնօրեն-հուշարարին (Կարինե Կունդակճյան), երաժշտական ձեւավորողին եւ դիմահարդարին (Սիմոն Նավիզյան), յուրաքանչյուրին (Մարկ Մուրաֆյան):

Ի՞նչ անենք, թե դրոֆեսիոնալ բատրոնի ներկայացում չէ: Կարեւորը հանդիսականների անընդմեջ ծիծաղն էր:

Մենք հայերեն... գիտենք

Ալ. Սարուխանի կատակերգության բեմադրության առիթով

ՄԱՆՅԱ ՂԱՋԱՐՅԱՆ

Գեհրոյի մի խումբ հայեր որոշեցին ՀԲԸ միության Ալեք Մանուկյան վարժարանի 25-ամյակը նշել մի բատերախաղով, որը կբռնափեր հայերին հուզող գլխավոր հարցերից մեկը՝ լեզվաղանդանությանը: Գործի դեկավարը՝ Նորա Ազատյանն ընտրեց Ալեքսանդր Սարուխանի «Մենք հայերեն չենք գիտեր» բատերախաղը:

Յանի «Մեծատոհմիվ մուրացկաններն» ու Երվանդ Օշյանի «Ընկեր Թանգունին»: Ալեքսանդր Սարուխանը, երգիծանկարները խարսխված են տեղի արաբական գեղագիտական մտածողության, համաբարեհայիկ երգիծանկարչական արվեստի հաջողությունների վրա եւ առատորեն ժանրի հիմնադրումն ու զարգացումը Մեծամոր Արեւելքի երկրներում:

Ալեքսանդր Սարուխանը բազմաբնույթ արվեստագետ էր, Ռամկավար ազատական, կուսակցության կարկառուն անդամ, գաղթավայրի ցավոտ հարցերի մասին հոդվածներ էր գրում: Փորձեց նաեւ բատերախաղեր գրել: Գրեց նաեւ «Մենք հայերեն չենք գիտեր» (1963) կատակերգությունը: Վերջինիս առիթ թեւադրում է բատերգության գաղափարական բովանդակությունը. խաղենու այն ներին հիմնագոհությունը, երբ ազգայինը ժխտելով իբր հաղորդակից են դառնում եվրոպականին:

Բատերախաղն ունի հինգ գործողություն, որոնցում նույն գաղափարները շեշտող բազմաթիվ կերկնություններ կան: Բեմադրողը նկարիչ եւ ասմունող, անցյալում իր դերասանական ունակությունները հաս դրսեւորած Նորա Ազատյանը բատերախաղն ազատեց երկարաոլատում տեսարաններից, կենտրոնական դարձնելով միայն ու միայն հայոց լեզվի, հայոց դպրոցի ոգեղանման կարեւորությունը: Ներկայացումն ունեցավ անընդմեջ երկու տարի, որից շահեց բեմադրությունը: Ալեքսանդր Սարուխանի բատերախաղն ունի տեղի եւ ժամանակի դասական միասնություն եւ խարսխված է կերպարների տիպաժային բնութագրումների, սուր խոսքի ինտոնացիոն նրբությունների վրա: Ներկայացման մեջ դոգմատիկ դերասան չկա: Բեմադրողը, ելնելով դիտեսի տիպաժների էությունից, յուրաքանչյուրի համար արջաղաղից ընտրել է համապատասխան շնորհալի մարդ: Ներկայացումն ունի ակտիվ զարգացում, աշխույժ երկխոսություններ, խոսքի մաքրելի շեշտադրումներ. հայկական դպրոցի ամեն ինչը վատ է, չնայած չնչին վատ է, բայց բանկ է ինչ ինչի՞ համար են բարեռաներ Պողոս Նուբար փաշան եւ ... Ալեք Մանուկյանը, բող վճարեն): Որքա՞ն իմաստալից են անգլիացի հարեւանի մուտքից հետո տեղի ունեցող երեւույթները, երբ դարզվում է, որ օտարը ծանոթ է Բաֆֆու երկերին, գիտի Սիամանթոյին, Վահան Թեքեյանին: Իսկ Սասունցի Դավի՞թը: Իրենք գործ չունեն այդոլիսի մարդկանց հետ. գեղջուկի մենկ է, այն էլ սասունցի: Հայոց դպրոցի հոգաբարձուն իր երեխային օտար դպրոց է տվել միայն ու միայն հայ ազգի շահերից ելնելով. բարձր հաղաքարության հաղորդակից դարձնելու համար (լցրել էին Դեհրոյտի գբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու դահլիճը եւ ներկայացումից հետո երկար ժամանակ չէին հեռանում, շնորհավորելով դերակատարներին, բեմադրիչին, խմբի տնօրեն-հուշարարին (Կարինե Կունդակճյան), երաժշտական ձեւավորողին եւ դիմահարդարին (Սիմոն Նավիզյան), յուրաքանչյուրին (Մարկ Մուրաֆյան):

Ի՞նչ անենք, թե դրոֆեսիոնալ բատրոնի ներկայացում չէ: Կարեւորը հանդիսականների անընդմեջ ծիծաղն էր:

ՀԱՅԱՏԻԼՍ

Պետությունը կիսվանավորի հայկական կինոն

ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Երկար մտորումներից հետո ՀՀ կառավարությունը վճռեց «Հայֆիլմ» կինոստուդիայի պետական դասվերի հարցը: Որոշվեց 22-25 միլիոն դրամ հատկացնել Սարեն Բաբայանի «Բարաբա» ֆիլմին:

Ինչպես տեղեկացրեց «Հայֆիլմ» կինոստուդիայի տնօրեն Գեորգ Գեորգյանը, ՀՀ կառավարությունը խոստացել է հուլիսին լուծել դեռեւս անցյալ տարի սկսած ֆիլմերի ֆինանսավորման հարցը: Ֆիլմերի նկարահանումները հիմնականում ավարտվել, մնացել են մոնտաժման եւ դասաձեւահանման աշխատանքները: Ըստ նախնական դայմանավորվածության ՀՀ կառավարությունը խոստացել է 15 մլն դրամ հատկացնել Ֆրունզե Դովլաթյանի «Դաս» ֆիլմին, որը արվում է Ֆրանսիայի Մարսելի քաղաքաթեատրանի հովանավորությամբ: Այնուհետեւ 22 մլն դրամ Լյուդմիլա Սահակյանի «Ձոն», Միքայել Դովլաթյանի «Մղձավանջը» Ֆրանսիայի «Բումերանգ» ընկերության հետ համատեղ, Հարություն Խաչատրյանի «Արարատյան վերջին կայանը» ԱՄՆ-ի «Բարեւ» դրոդուկցիոն ֆիրմայի հետ համատեղ:

Վերջինս դատրաստվում է մասնակցել Լոս Անջելեսի կինոփառատոնին: ՀՀ կառավարությունը խոստացել է ֆինանսավորել նաեւ «Հայֆիլմ» կինոստուդիայի հետագա գործունեությունը: Նախնական դայմանավորվածության համաձայն եկող տարվա պետական դասվերին կհատկացվի մեկ մլն դոլար, որը կդրամադրվի երեք գեղարվեստական, երկու մուլտիպլիկացիոն, երկու դեբյուտային, 15-17 վավերագրական ֆիլմերին: «Հայֆիլմ» կինոստուդիայի աշխատանքները խթանելու նդատակով «Հայատան» հիմնադրամը խոստացել է ֆինանսավորել Ներսես Հովհաննիսյանի «Կտակը», իսկ Երքաղխորհուրդը՝ Վիգեն Չեդրանյանի «Տեր ողորմյա» ֆիլմերը:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Թատրոնը բացեց վարագույրը

Հունիսի 9-ին, եռամյա ընդմիջումից հետո, Երեւանի Ստանիսլավսկու անվան ռուսական բատրոնը կրկին բարձրացրեց իր վարագույրը, հանդիսատեսի դատին հանձնելու Բրիկերի եւ Լասեգի «Օհ, այս ֆրանսիական բաները» գերկատակերգությունը: Նշենք, որ ներկայացումն աղմկալի հաջողություն ունեցավ Ստավրոդոլում կայացած հայ մշակույթի օրերին, բատրոնի հյուրախաղերի ժամանակ: «Չնայած դժվարություններին բատրոնն, ինչպես տեսնում եք, ադրում եւ աշխատում է, ասաց գեղարվեստական դեկավար Ալ. Գրիգորյանը: Այժմ մեր խաղացանկում յոթ ներկայացում կա, որոնց թվում Գորինի «Հոգեհանգստի ադոթքը», Դեհիգենի «Կինը խաղից դուրս» եւ Կոնստանտինովի «Սերն արգելվում է» բեմադրությունները: Լարված աշխատում ենք մոսկվացի երիտասարդ դրամատուրգ Մ. Արբատովայի «Դանգ նախ Վիտեն» դիեսի բեմականացման վրա: Այն դատմում է ռուս մարդկանց, ռուս մտավորականության սոցիալական եւ բարոյական ցավոտ հարցերի մասին, որոնք հարում են մեր ազգային խնդիրներին: Բեմադրությունն իրականացնում է Երեւանի բատերական ինստիտուտի շրջանավարտ, երիտասարդ ռեժիսոր Ս. Դանիելյանը, իսկ նույն ինստիտուտի դրոֆեսոր Ռ. Ջրբաշյանի բեմադրությամբ հանդիսատեսը կդիտի լենինգրադցի Բ. Դաուերի «Ռուսական աղջ» ներկայացումը:

Մեր ներկա գլխավոր խնդիրներից մեկն էլ Ստանիսլավսկու 200-ամյա հորելյանը նշելու դատրաստությունն է: Ինչպես հայտնի է, ավելի քան 150 տարի առաջ Էրիվանի բերդի ռուս աղաների ուժերով առաջին անգամ խաղացվել է Գրիբոյեդովի «Խելքից դատուհասը»: Մտադիր ենք դեկտեմբերին ուրախացնել մեր այցելուներին այս ներկայացմամբ»:

ՀԱՄԱՌՈՏ

Հրաժեշտի համերգ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 10 ՀՈՒՆԻՍ, ՈՒՍ: Մստիսլավ Ռոստրոպովիչի հրաժեշտի համերգը՝ «Սալյուտ Սլավե» խորագրով, տեղի կունենա հունիսի 17-ին, վաճինգտոնյան «Քենեդի» կենտրոնում, որ կնշանավորի ԱՄՆ-ի ազգային սիմֆոնիկ նվագախումբը դեկավարելու երաժշտի 17-ամյա դայմանագրի ավարտը: Արժանավոր վաստակի համար Ռոստրոպովիչին շնորհվել է ամերիկյան բարձրագույն դարգեւը՝ «Ազատության մեդալը»: Մոտակա մեկուկես ամսում Ռոստրոպովիչը Ստոկհոլմում բեմադրելու է Ռոդիոն Շչեդրինի «Լոլիտա» օպերան, իսկ 1995 թ. մտադիր է երկու ամիս աշխատել Մոսկվայում, ռեժիսոր Բորիս Պոկրովսկու հետ՝ «Խովանշչինի» նոր բեմադրության վրա:

Տրյուֆոյի ֆիլմերի փառատոն Հայաստանում

ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Մոտ օրերս Երեւանում կսկսվի հանրահայտ կինոբեմադրիչ Ֆրանսուա Տրյուֆոյի ֆիլմերի փառատոնը: Փառատոնը կազմակերդել է Ազգային ֆիլմադարանը՝ հայ-գերմանական ընկերության հետ համատեղ: Նդատակ ունենալով առավել ամբողջական ներկայացնել երեւանյան հադիսատեսին ոչ այնքան ծանոթ ռեժիսորի կինոաշխատանքները՝ ֆիլմադարանը տդագրության է ներկայացրել նաեւ Տրյուֆոյին նվիրված համառոտ տեղեկագիրք: Այն լրացուցիչ տեղեկություններ կտա նրա ֆիլմերի մասին: Ազգային ֆիլմադարանի տնօրեն Գարեգին Զաքոյանը հայտնեց նաեւ, որ առաջիկայում դատրաստվում է Յուրի Երզնկյանի ֆիլմերի հեռահայաց ցուցադրություն:

ԱՐԽԻՎ

Մոցարտի նամակը Ղորդանյանի հավաքածուում

Շուրջ 5000 նյութ է դարունակում դարասկզբի հայ նշանավոր երաժշտագետ եւ կոդեկցիոներ Վասիլ Ղորդանյանի (Կորգանով) արխիվը: Վերջերս Հայաստանի Ցարենցի անվան գրականության եւ արվեստի բանգարանում, Ղորդանյանի արխիվի ուսումնասիրության հետեւանքով, հայտնաբերվել է հիմնականում 19-դ դարի արեւմտաեւրոդական երաժիշտների (Զիգֆրիդ Դեն, Օսսո Յան, Անրի Բլանշար, Լուիջի Բորդեզե) ձեռքով գրված 143 նամակներից բաղկացած մի հավաքածու: Հայտնաբերված նամակների մեջ կա Մոցարտի ձեռքով 1778թ. գրված մեկ նամակ՝ հասցեագրված իր բարեկամին, ինչպես նաեւ նշանավոր բախագետ Ֆորկելի՝ նույն թվականին գրված նամակներից մեկը: «Կարծում եմ, որ այս նամակները երաժշտագետների եւ մասնագետների լուրջ ուսումնասիրության կարիք ունեն, որից հետո միայն կհնչվի դրանց վավերականությունն ու բովանդակությունը», ասաց ԳԱԹ-ի տնօրեն Հենրիկ Բախչինյանը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Konecco Фортуны»-ն աշխատանքի է հրավիրում երջիկ լրագրավաճառների: Երաշխավորվում է բարձր աշխատավարձ: Պայմաններին ծանոթանալու համար դիմել Երեւան, Արգակունյաց դող. 1 (Մամուլի տուն), 8 h., 806 սենյակ: Հեռ. 522-248

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Երկդեմ կինը

«Ցանկանում եմ ձեզ տեղյակ դահել, Ռոզալինդ, որ ինչ-որ մեկը ձեր անվան տակ վեթեր է գրում»: Երբեմ ոչ մի գրաֆինադաշի մտքով չէր անցնի, որ Օխֆորդի երջանավարս 43-ամյա Ռոզալինդ Մայլզը, որ 28 տարեկանում դարձավ Անգլիայի ամենաերիտասարդ մագիստրոսը, այժմ լրագրող եւ համբավավոր էսսեների հեղինակ, գրական մրցանակի դափնեկիրը կարող էր գրել այդ կասկածելի «վեթերը»: Վերոհիշյալ հարցին Ռոզալինդը դատասխանել է հակիրճ. «Ես այդ մասին կասեմ իմ գործակալին», ցանկանալով դահել իր վարկը գրական ներկայացուցչի մոտ եւ միաժամանակ խորհրդավորություն ստեղծել հարցի շուրջը: Ինքնադատությունը, ուրեմն, տեղյակ չէր, որ «Աշխարհի կանանց դատմության» հեղինակի գրչին են դատկանում նաեւ շանթահարող տդաֆանակով այրող բեսբսելերները խոստումնալից վերնագրերով, ինչդես՝ «Երկդեմ վրեժխնդրություն» կամ «Մեղքի խոստումները»: Հրճված գրական կերդարի իր դողարկված երկվությամբ դարագայով՝ Ռոզալինդ Մայլզը չունի սեքսիական անձը վիրավորելու զգացում, եւ անցնում է մի գործունեությունից մյուսը: «Իմ էսսեներում ես միշտ ուշադրություն եմ կանանց անհրաժեշտ իրավարության գաղափարը, ասում է նա, իսկ իմ վեթերում նկարագրում եմ ոչ գեղեցիկ, ոչ էլ երիտասարդ կանանց, որոնք գիտակցում են, որ միշտ կարող են իրենք ընտրություն անել»: Սակայն, դատելով փոստից, որ ստանում է Ռոզալինդ վիդագիրը (ընդ որում, ավելի ծավալուն, քան Ռոզալինդ էսսեիստին՝ հասցեագրվածները), նրա «ազատագրված կանանց» արկածները նույնդիսի հաջողություն ունեն նաեւ տղամարդկանց մեջ: «Ես մեծ քանակությամբ ամուսնության առաջարկություններ եմ ստանում, ծիծաղում է Ռոզալինդը, ընդերցողներս կարծում են, թե ես սեքսուալ առումով շատ կրքոտ եմ»: Նա արհամարհում է անգլիացի գրաֆինադատերերի կարծիքը, որոնք «օծում են» հաջողություն ունեցող գրողին: «Իմ սեքսի մասին խոսելը նրանց մեջ ուրդ տագնադ է առաջացնում, հեգնում է Ռոզալինդը: Փոխարենը, Ամերիկայում եւ Ֆրանսիայում իմ վեթերն ամենալավն են ընդունվում»:

Ն. Ղ.

ԵՐԵՎԱՆ

Կիրապարակվեն փաստաթղթերի ժողովածուներ

ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Հայաստանի դատմության դեդական արխիվի աշխատանքներում մեծ տեղ է հատկացվում հրատարակչական գործունեությանը, որի նդատակն է մատչելիանացնել տարբեր բնագավառներին առնչվող փաստաթղթերը մասնագետների աշխատանքը հեշտացնելու նդատակով: Այսօր արխիվի եւ Հայաստանի Ազգային ակադեմիայի դատմության ինստիտուտի համատեղ ջանքերով կազմվել եւ հրատարակման է դատրաստ մեր երկրի տարբեր ժամանակաշրջանների փաստաթղթերի ժողովածուն: Նույն հատատությունները տդագրության են դատրաստում «Հայաստանի Հանրագրություն» գիրքը: Համալսարանի ծննդյան 75-ամյա հորելյանին է նվիրված «Հայաստանի համալսարան» փաստաթղթերի ժողովածուն: Մեկ այլ կարեւորագույն աշխատանք է «1801-1920 թթ. ընդգրկվող Հայ ժողովրդի էթնոմատիա» դդրդցական եւ բուհական ձեռնարկը, որի լույսընծայումը արխիվն իրականացնում է համալսարանի հայոց դատմության ամբիոնի մասնագետների հետ:

digitised by A.R.A.R.@

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ժոաո Ավելանժ. «Ես պաշտպանում եմ ֆուտբոլի շահերը»

Ֆրանսիական «Էկիպ» օրաթերթը հեռաբրիր հարցազրույց անցկացրեց ֆուտբոլի FIFA-ի նախագահ բրազիլացի Ժոաո Ավելանժի հետ: Այդ հարցազրույցը կրճատումներով ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

ԳԲԻԳՈՐ ԱՄԻՐՋԱՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

– Պրն. Ավելանժ, 1998 թ. կլրանա 24 տարին, ինչ ղեկավարում եք FIFA-ն, կարո՞ղ եք արդյոք հաստատել 77 տարեկանում Ձեր ուժի գաղտնիքը:

– Այն կարծիքն ունեմ, որ ես կատարելապես պաշտպանում եմ ֆուտբոլի շահերն ու իրավունքները եւ այն մտայնությունը, որ ներկայիս փուլում ղեկավարում եմ միջազգային մի ֆիրմա կոնցեռն, որտեղ խաղացողները, մարզիչները, բժիշկները, մրցավարները եւ ղեկավարները (շուրջ 200 միլիոն մարդ) ներկայացնում են այս ֆիրման, որոնք աղորում են ֆուտբոլի շնորհիվ: Իսկ եթե դրան ավելացնենք նրանց ընտանիքները, արդա շուտով կհասնենք մոտ մեկ միլիարդ բվին: Այլ կերպ ասած, աշխարհի բնակչության մեկ հինգերորդը:

– Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ է FIFA-ն ղեկավարվել այնպես, ինչպես պարզ մի ֆիրմա:

– Ես երբեք իմ անձնական գործերը չեմ խառնել FIFA-ի նախագահի պաշտոնի հետ:

Հայրենիքում Բրազիլիայում, ունեմ ավտոբուսի ամենամեծ ֆիրման: Իմ երկրի առաջատարական ամենամեծ ընկերության փոխնախագահն եմ: Ունեմ նաեւ քիմիական ֆիրմա: Ճամփորդության ժամանակ գտնվելով աշխարհի տարբեր վայրերում, բազմիցս կարող էի օգտվել FIFA-ի նախագահի պաշտոնից, դրամ վաստակելու նպատակով: Սակայն երբեք նման բան չեմ արել: Իմ միակ ցանկությունն է դրամ գտնել ֆուտբոլի համար:

– Ինչի՞ համար է պետք դրամը ֆուտբոլին:

– Մինչեւ 1974 թ. FIFA-ն կազմակերպում էր միայն աշխարհի առաջնություններ եւ օլիմպիական խաղերի ֆուտբոլի բաժինը: Ներկայիս FIFA-ն ավելին է կազմակերպում, ինչպես մինչեւ 20 տարեկան պատանիների աշխարհի առաջնությունը եւ մինչեւ 17 տարեկան կանանց առաջնությունը՝ փակ մարզադաշտում: Այս ամենի հաջողության գաղտնիքը իմ շատ պահանջկոտ եւ խիստ մոտեցումն է հեռուստակայանների եւ հովանավորող ընկերությունների ղեկավարների հետ, դրան էլ բազմապատկեմ շահի ներմուծումը FIFA:

Ներկայիս ֆուտբոլի աշխարհի առաջնության գավաթը ամեն 4 տարին մեկ 30 գումարներ է ստեղծում: Իմ մոտեցումն այս է. եթե գնդակը «չշարժվի», արդա ֆուտբոլը կմեռնի, իսկ եթե աշխարհի չորս անկյուններում մրցումներ կազմակերպվեն, ֆուտբոլը կաղի:

– Ուրեմն Ձեր յամենամեծ գործը դրամ գտնելն է, որպեսզի ֆուտբոլն ավելի լավ ապրի:

– Այո, դրամ գտնել ու բերել: Նոր երկրներ արավել, նոր ոլորտներ, նոր միջավայր, ինչպես Միացյալ Նահանգները կամ Ասիան: Եւ վաստակած դրամով առաջնություններ կազմակերպել, ինչպես աշխարհի երիտասարդական գավաթը:

– Այսքան մեծ գումարներով աշխարհ ընկած պրոֆեսիոնալ ֆուտբոլը կկարողանա՞ արդյոք «մաքուր» մնալ:

– Ֆուտբոլը մաքուր է: Օրինակի համար աշխարհի առաջնության գավաթակրիվ մենք պարտադրում ենք բարեգործական խաղ անցկացնել: Այդ հանդիպումից ստացված ամբողջ գումարը, շուրջ 1 միլիոն դոլլար, FIFA-ն տրամադրում է UNISEF կազմակերպության տնօրինությանը, որն օգնում է չքավոր ընտանիքներին, որը երեխաներին եւ այլն: Եթե ամեն միջազգային կազմակերպություն մեզ նման գործեր, արդա աշխարհի կացությունն ավելի լավ կլիներ:

ՄԱԿ-ում աշխատում են բազմահազար պաշտոնյաներ, բայց կոնկրետ ի՞նչ շոշափելի գործեր են վերջիններս կատարել: Ոչինչ: Ես բազմիցս եղել եմ բույլ զարգացած երկրներում եւ ցանկանում եմ, որ այդ երկրների ֆուտբոլը վերելք ապրի, որպեսզի ուրախության մի բանի բոլորը պարզեի առանց այդ էլ աղքատության մեջ գտնվող իրենց ժողովուրդներին:

– Բայց զարմանալին այն է, որ շատերը Ձեզ մեղադրում են այն բանի համար, որ դուք ավելի շատ ուշադրություն եք դարձնում հարուստ երկրներին: Եւ հենց վերջիններիս էլ վստահել եք անցկացնել աշխարհի առաջնության գավաթի խաղերը՝ ԱՄՆ (1994 թ.), Ֆրանսիա (1998 թ.):

– Երբ ապրանքները, ինչպես Աֆրիկայի ցամաքամասում, կարողանան կազմակերպել աշխարհի առաջնության խաղերը, ես մեծ սիրով կտրամադրեմ կազմակերպության դեկը:

– Ուզում եք ասել, որ Աֆրիկան շա՞տ գործ ունի անելու:

– Շատ մրցումներում Եվրոպայի հետ հեռախոսային կապի մեջ մտնելու համար անհրաժեշտ է սպասել առնվազն 40 րոպե:

Կարո՞ղ եք արդյոք պատկերացնել, թե ինչ կլինի, եթե աշխարհի առաջնության ընթացքում բազմահազար լրագրողների բանակին նման խնդրի առջեւ կանգնեցնենք: Ցանկությունը մի բան է, իսկ կազմակերպելն ու անցկացնելը ուրիշ: Բայց Մարոկկոյի եւ Հարավային Աֆրիկայի կատարած գործերը ակնառու են՝ եւ արժանի են գովեստի: Երբ այդպես շարունակվի, կարելի է մտածել այդ ուղղությամբ 2006 թվականի աշխարհի առաջնության խաղերը կազմակերպել Աֆրիկայում:

– Այսինքն ուզում եք ասել, որ 2002 թ. առաջնության խաղերի անցկացման վայրն արդեն որոշվա՞ծ է:

– 2002 թ. Աշխարհի գավաթի խաղերը պետք է կայանան Ասիայում, որ շատ հովանավորներ, ֆիրմաներ, գովազդային ընկերություններ կան:

– FIFA-ն մտադի՞ր է զարգացնել ֆուտբոլը ԱՄՆ-ում աշխարհի առաջիկա առաջնությունից հետո:

– Ամերիկացի կազմակերպիչներից պահանջեցինք ներկայացնել առաջիկայում ԱՄՆ-ում ազգային առաջնություններ անցկացնելու ծրագիր: Եւ այդ առաջնությունները տեղի կունենան:

– Բայց ինչպե՞ս բացատրել 70-ական թվականներին ԱՄՆ-ում եվրոպական ֆուտբոլի անհաջողությունը:

– Ամենամեծ սխալն այն է, որ խաղերն անցկացվում էին սինթետիկ ծածկ ունեցող մարզադաշտերում: Ինչպես գիտեք, դրանք շատ վնասակար են խաղացողների առողջության համար եւ ծանր վնասվածքներ ստանալու հավանականությունը մեծանում է: Բացի այդ, ամերիկացիներն արագորեն դրամ շահելու նպատակով Եվրոպայից եւ Հարավային Ամերիկայից հրավիրեցին մեծ ու «ծեր» աստղերի, աչքաթող անելով տեղի տաղանդների բացահայտման գործը, որն էլ ձախողման պատճառ դարձավ: Այսօր այդ սխալները շտկված են, եւ հույս ունենք, որ Միացյալ Նահանգները շուտով կդառնա ֆուտբոլային մեծ տերություններ մեկը:

– Պրն. Ավելանժ, ասեք ի՞նչպես է լինելու աշխարհի առաջնության խաղերի հեռարձակումը եւ որ հեռուստակայաններն են նկարահանելու:

– Սկզբում առանձնապես հետաքրքրություն եւ ուշադրություն չկար, սակայն շուտով սեւ «կոխի» տեղի ունեցավ ABC ու CBS հեռուստակայանների միջեւ, եւ ի վերջո հաղթեց ABC-ն, որը եւ իրավունք ստացավ հեռարձակելու բոլոր 52 խաղերը:

– Իսկ ժամերի տարբերությունը. խաղերը ո՞ր ժամին են տեղի ունենալու Եվրոպայի հեռուստադիտողի համար:

– Եվրոպական բիմերի խաղերը տեղի են ունենալու կեսօրին կամ կեսօրվա ժամը 1-ին, Միացյալ Նահանգների ժամանակով, երբ Եվրոպայում երեկոյան ժամը 6-ից 8-ն է:

– Հավատ եք արդյո՞ք, թե ինչ եկամուտ կբերեն 1994 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերը:

– Մեծ եկամուտներ նշանակում: Առաջնության գլխավոր հովանավորը հանրաճանաչ «General Motors» ավտոմեքենաների կոնցեռնն է:

Հեռուստակայանների նկարահանումների իրավունքի վաճառքից ստացված գումարը կկազմի 340 միլիոն շվեյցարական ֆրանկ: Վաճառքի պետք է դրվի 3500000 տոմս, մինչդեռ Իտալիայում վաճառվել էր միայն 2400000 տոմս:

ԸՍԲՇԱՍՍԱՐՍ

Գլխավոր դերը՝ հովանավորին

ՅՈՒՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ.

Կարճ տեւեց Հայաստանի սամբոյի պատանեկան առաջնության արդյունքների ամփոփումը: Նշվեց, որ հաղթեցին, իսկապես արժանիները եւ որ նրանց առաջիկայում սպասվում է շատ կարեւոր մրցաշար: Հավակնորդ մարզական խորհուրդը պետք է ջանք ու եռանդ չխնայի հունիսի 30-ին, Լիտվայի Պյունեւժիս քաղաքում մեկնարկելիք աշխարհի պատանեկան առաջնությանը տղաներին լավ նախապատրաստելու համար: «Իսկ մինչ այդ, պետք է հովանավորներ որոնել-գտնել» ասաց մարզածեւի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Գ. Գեւորգյանը: Նրանց շահագրգռել, խնդրել, որ հոգան ուղեւորության հետ կապված ծախսերի մասին»: Այո, կառավարությունը դեռեւս համապատասխան գումար չի հատկացրել սպորտվարչությանը, որպեսզի վերջինս կարողանա ինքնուրույն իրականացնել նախօրոք մշակած, կազմված ծրագիրը: Հենց թեկուզ նշած մրցաշարը: Այն անցկացվեց մասնագետների նախաձեռնությամբ: Երեւանի «Դինամո» մարզադահլիճում ծավալված իրադարձությունների մասնակիցներն իրենց գրպանի հաշվին էին ծախսերը կատարել, ասել է թե՝ վճռական խոսքը այժմ իսկապես պատկանում է մեր գործարարներին, եւ հուսանք, որ նրանց շրջանում կլինեն այնպիսիք, ովքեր իրենց գործից զատ շահագրգռված են հայրենական սպորտի, մեր մարզիկների հետագա հաջողություններն ապահովելու գործերով: Առաջնությանն անդրադառնալով ասենք, որ մրցագորգ ելան 64 մարզիկներ, որոնք ներկայացնում էին Երեւանը, Գյումրին, Վանաձորը, Իջեւանը, Նոր Հաճնը եւ Աբովյանը: Առավել վստահ մրցելույթներով առանձնացան ՀՀ լուսնախարարարության սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական հերթափոխի հանրապետական դպրոցի (տնօրեն՝ Լ. Հայրապետյան) սաները: Այդ մասին է վկայում նաեւ այն փաստը, որ մեծամասամբ նրանցով էին համալրված եզրափակիչի մասնակից զույգերը: Առաջնությունն ուրախալին, սակայն, մասնակիցների մարտունակության հատկանիշն էր, որը մեծապես նպաստեց մրցումների բարձրացմանը եւ դիտարժանությանը: Եւ հաղթողներ դարձան լուսնախարարության վերոհիշյալ մարզադպրոցի սաներ Արսեն Պետրոսյանը (48 կգ), Արարատ Հովհաննիսյանը (60կգ), Մելիք Հովհաննիսյանը (65 կգ), Արման Հովհաննիսյանը (70 կգ), Միխայել Բաղալյանը (87 կգ), իջեւանցի Նվեր Շահնազարյանը (81 կգ), Վանաձորի դինամոյական Ավետիք Աբրամյանը (75 կգ). «Հայաստան» ՄՄ երեւանյան դպրոցի ներկայացուցիչներ Լաերտ Բարխոյանը (57 կգ) եւ Կարեն Աբրահամյանը (56 կգ): Նրանք բոլորը, ինչպես նաեւ բազմաթիվ այլ մրցանակակիրներ, իսկապես մարզական լավ հատկանիշներով են օժտված եւ նպատակային մարզումները շարունակելու պարագայում ի վիճակի կլինեն պատվով շարունակելու սամբոյի հայկական դպրոցի բարի ավանդույթները: Այսօր նրանց համար շատ կարեւոր է ուսումնամարզական հավաք կազմակերպել՝ լիտվական սուրբաեսին մասնակցելու եւ հաջողություն հասնելու նպատակով:



ՖՈՒՏԲՈԼ

Կրկին նույն խառյակը

ՀՀ առաջնություն բարձրագույն խումբ 9-րդ տուր

«Շիրակ»-«Ցեմենտ»	3-2
ՀՄՄ ՖԻՄՍԱ-«Արարատ»	0-5
«Բանանց»-«Կոտայք»	3-0
«Ազնավուր»-«Նաիրիտ»	1-0
«ԲՄՍ Արայի»-«Վան»	0-2
«Կանազ»-«Լոռի»	0-1

Առաջնության աղյուսակը հունիսի 11-ի դրությամբ

	Մ	Խ	Հ	Ա	Պ	Գ
1. Շիրակ	18	9	9	0	0	33-5
2. Բանանց	16	9	8	0	1	39-4
3. ՀՄՄ	14	9	7	0	2	32-5
4. Արարատ	13	7	6	1	0	37-2
5. Ցեմենտ	12	8	5	2	1	20-11
6. Կոտայք	11	9	5	1	3	35-13
7. ՀՄՄ ՖԻՄՍԱ	9	8	3	3	2	16-10
8. Ազնավուր	7	8	3	1	4	9-29
9. Վան	6	8	3	0	5	11-21
10. Լոռի	5	8	1	3	4	3-19
11. ԲՄՍ Արայի	4	9	2	0	7	11-36
12. Նաիրիտ	4	9	1	2	6	6-15
13. Երազանք	4	8	1	2	5	6-21
14. Զանգեզուր	3	9	1	1	7	4-44
15. Կանազ	0	8	0	0	8	5-32

Երեւան, Սայաթ Նովա 10, հեռ. 525210, 582831

digitised by A.R.A.R.@

Օրվա հետքերով

ՄՈՍԿՎԱ

Նազարբաեւի նախագիծը ուշադրության կենտրոնում

ՄՈՍԿՎԱ, 9 ՀՈՒՆԻՍ, ՌԻԱ ՍՆԱՐԲ: Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի առաջարկած Եւրասիական միության նախագիծը 10 նախկին միութենական հանրապետությունների ավելի վաղ ստորագրած ԱՊՀ տնտեսական դաշինքի պայմանագրի տրամաբանական շարունակությունն է համարում Պետդումայի պատգամավոր, «Յաբլոկո» խմբակցության ղեկավար Գրիգորի Յավլինսկին: Խմբակցությունը ԱՊՀ երկրների տնտեսական կապերի զարգացումը միանգամայն անհրաժեշտ է համարում, ասաց Յավլինսկին, եւ տվյալ դեպքում Նազարբաեւը խնդրում է այդ գաղափարի կենսագործման տարբերակներ: Իր հերթին պատգամավոր Սերգեյ Բաբուրինը նշեց, որ Ղազախստանի նախագահի առաջարկությունը թեեւ արժանի է լուրջ ուշադրության, բայց «չի կարող փոխարինել միասնական դաշնակցային պետության վերականգնման խնդրին»: Բաբուրինի կարծիքով, «դրա աճանցը պետք է դառնա Ռուսաստանը»: «Իսկ Ռուսաստանի հետ վերամիավորվել չցանկացող նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ պետք է դաշինք կնքվի Ղազախստանի նախագահի առաջարկած սկզբունքով», նշեց նա:

Եւրասիական միության կազմավորման վերաբերյալ Ղազախստանի նախագահի նախագիծը հրապարակվել էր այս շաբաթ: Այն նախատեսում է ԱՊՀ գործունեությանը զուգահեռվող լրացուցիչ միասնացման կառույցի եւ մի շարք վերազգային մարմինների ստեղծում:

ԲԱՔՈՒ

Գրաչովին աղաղակում է դժվար խոսակցություն

Երեկ Երեւանից Թբիլիսի ժամանած Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովին ընդունեց Վրաստանի պետության ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն: Զրույցի ընթացքում մոսկվացի հյուրը եւ Վրաստանի ղեկավարը Ռնարկեցին խաղաղարար ուժեր Աբխազիա մտցնելու եւ Վրաստանի տարածքում ռուսական զորքերի ժամանակավոր ներկայության հարցերը: Պավել Գրաչովը ցանկություն հայտնեց այդ թեմաներին առանձին Ռնարկել Վրաստանի պաշտպանության նախարար Վարդեն Նաջիբարիձեի հետ:

ԲԱՔՈՒ, 10 ՀՈՒՆԻՍ, ՌՆԱՐՔ: Բիշքեկի արձանագրության հիմնական նախաձեռնողներից մեկը՝ Պավել Գրաչովը, Ղարաբաղի հակամարտության կարգավորման ռուսական ծրագրի ընդունմանն ուղղված հարկադիր միջոցառումների կողմնակից է, գտնում է «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությունը: Ընդսմին ռադիոկայանը նշում է, որ Ռուսաստանի ռազմական գերատեսչության ղեկավարը շարունակում է անտեսել միջազգային կազմակերպությունները: Մինչդեռ հաղորդվում է, որ բավական երկար լռությունից հետո Գերմանիայի կառավարությունը նույնպես որոշել է արձագանքել Մոսկվայի դիտավորություններին: Պաշտոնական Բոնն ի ներկայացուցիչը հայտարարել է, թե ԱՊՀ երկրներում շրջանային հակամարտությունների ռուսական միջամտությունը այն աղառնալիին է սպեղծում, որ Մոսկվան բացառիկ դեր կարող է ստանալ փլուզված խորհրդային կայսրության մեջ: Նրա կարծիքով, Ռուսաստանի գործողությունները պետք է անդայման ստանան ՄԱԿ-ի կամ ԵԱՀԽ-ի բույլտվությունը: Մինչդեռ Սամարայում անցկացվող ՆԱՏՕ-ի անդամ պետությունների արտգործնախարարների հանդիպման ժամանակ որոշ ներկայացուցիչներ ուղղակի հայտարարել են, թե Արեւմուտքն այսօր կոնկրետ ռազմավարություն չունի տվյալ խնդրի առթիվ եւ արեւմտյան որեւէ երկիր պատրաստ չէ խաղաղարար ուժեր ուղարկել ԱՊՀ հակամարտությունների շրջաններ: Համենայն դեպս, եթե հավատանք «Ազատություն» ռադիոկայանին, Ռուսաստանի հատուկ հանձնարարությունների դեսպան Վլադիմիր Կազիմիրովի վերջերս Բաքու կատարած այցի ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել Ադրբեջանի տարածքում ԱՊՀ խաղաղարար ուժերի տեղաբաշխման մասին, որոնց միայն մեկ երրորդն են կազմելու ռուսական զորքերը: Նշվում է, որ այդ պահանջն է ներկայացրել հանրապետության արտգործնախարար Հասան Հասանովը: Ըստ որում, նա պնդում է, որ այդ ուժերն Ադրբեջանում մնան վեց ամսից ոչ ավելի: Ամենայն հավանականությամբ այս եւ մյուս հարցերը կարծարձվեն հունիսի 11-ին Պավել Գրաչովի Բաքու կատարելիք այցի ժամանակ:

ԱՇԽԱՐՀ

Բոսնիային զենք չնայած Քլինթոնի առարկություններին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 10 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը քվեարկեց Բոսնիային զենքի մատակարարումների վրա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի դրած արգելքը Միացյալ Նահանգների կողմից միակողմանի կարգով չեղյալ հայտարելու օգտին: Այդ որոշումն ընդունվեց չնայած Քլինթոնի վարչակազմի վճռական առարկություններին: Արգելքը վերացնելու օգտին քվեարկեցին ներկայացուցիչների պալատի 244, դեմ՝ 178 անդամներ:

Բոսնիային զենք մատակարարելու հարցի քննարկումից առաջ Սոֆիայում տեղի ունեցավ ներկայացուցչական պատվիրակություն էր ուղարկել Կաթիտոլիումի բլուր, որի մեջ էին ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ուիլյամ Փերին, ԱՄՆ-ի զինված ուժերի շտաբների պետերի կոմիտեի նախագահ Ջոն Շալիկաշվիլին եւ ԱՄՆ-ի պետքարտուղարի առաջին տեղակալ Սթրոբ Թելբոտը: Նրանք դռնփակ հանդիպում էին ունեցել մի մեծ խումբ օրենսդիրների հետ, փորձելով նրանց համոզել, որ չքվեարկեն արգելքը միակողմանիորեն չեղյալ հայտարարելու օգտին:

«ԱՄՆ-ի միակողմանի գործողությունները պատակտում կմտցնեն ՆԱՏՕ-ի մեջ եւ ներհակություններ Ռուսաստանի հետ ունեցած մեր հարաբերություններում», ընդգծվում է Փերիի, Շալիկաշվիլու եւ Թելբոտի համատեղ հայտարարության մեջ, որը հանձնվել էր կոնգրեսականներին:

Ներկայացուցիչների պալատում սակայն գերակշռեց նրանց տեսակետը, ում կարծիքով ներկայիս արգելքը մուսուլմաններին հնարավորություն չի տալիս հավասար ուժերով կռվելու սերբական ագրեսիայի դեմ:

Նոր հրամանատարություն Թուրքիայում

ԴԵՊ-ի հրամանատարական կուսակցության 41 անդամներ մայիսի վերջերին Թուրքիայի ներքին գործերի նախարարությանը հայտ են ներկայացրել կազմելու ՀԱԴԵՊ անունով մի նոր կուսակցություն: Նրա հիմնադիր-նախագահը Մուրադ Բոսլակն է, որը նախկինում ԴԵՊ-ի գլխավոր քարտուղար է եղել: Նրա խոսքերով, նոր կուսակցությունը սոսկ շարունակությունը չէ նախորդի ԴԵՊ-ի, որի գործունեության դեմ դատական գործ է հարուցված «երկիրը պառակտելու» մեղադրանքով:

«Մենք նոր կուսակցություն ենք, բայց հավատում ենք, որ ԴԵՊ-ը ըստ հիրարանության կարծիքի տվյալների, համարվում է մարտնչող PKK-ի «խորհրդարանական թեւը»:

«Մենք նոր կուսակցությամբ»:

«Արմենյան Միրոր-Սոցկերեյթոր» թերթի վերոհիշյալ հաղորդումը նաեւ նշում է, որ ԴԵՊ-ը հիմնվել էր 1993-ին նախորդ նրա նախորդը՝ ՀԵՊ-ը (Ժողովրդական աշխատանքային կուսակցություն), փակվեր սահմանադրական դատարանի որոշմամբ: Այս տարվա սկզբներին ԴԵՊ-ի 6 խորհրդարանական անդամներ զրկվել էին իրենց անձեռնմխելիության իրավունքից եւ կալանվել: Նրանց դատավարություն է սպասում «Թուրքիայի տարածքային ամբողջականությունը վտանգի ներկայացնելու» մեղադրանքով:

ՀԱՄԱՌՈՏ

Ցեղախմբության երեւույթ Գլենդելում

«Ցեղախմբության եւ հակահայկականության չտիպազանց տգեղ մի երեւույթ արձանագրվեց Գլենդելում մայիսի 14-ին, երբ նացիստական կեղծաշի նշաններ եւ անվայել հայհոյանքներ հայտնվեցին հայկական մի շարք հասատարությունների պատերին», հայտնում է ԱՄՆ-ում լույս տեսնող «Արմենյան Միրոր-Սոցկերեյթոր շաբաթաթերթը»:

Մեծ թվով հայերի ընդունած հաղորդում միջադեպը տեղի է ունեցել այն օրերին, երբ տեղի լրատվության գործակալությունների կողմից հնարկվում էր Հայկական գեղասարության օրը Հիշատակի օր հռչակելու հարցը: Տեղական իշխանությունների պատասխանը հարցին միանշանակ է եղել. «Նրանք ապավաղում են հաղորդի տեսքը», «Նրանց ներկայությունը ցանկալի չէ»: Այդ դիտարկումներն էլ հետեւել են, փաստորեն, տեղի ՀՄԸՄ մարզական միության պատերին վերոհիշյալ արձանագրությունները, որոնց ենթատեքստը ավելի քան հասակ է:

Առանձին Արեւմտյան շրջանային կոմիտեն, որն զբաղվում է հակավարկաբեկչական հարցերով, անմիջապես գործի է անցել եւ Հետաքննությունների ֆեդերալ բյուրոյից պահանջել հնարություն անցկացնել մարդու իրավունքների խախտման փասի դեմ, սահմանելով 500 դոլար մրցանակ՝ հանցանքի տեղեկության համար: Դրանք կնպաստեն հանցագործությունը բացահայտմանն ու մեղավորներին ենթարկելմանը:

ԳՆՈՒՄ ԵՄ

Մեկ կամ երկու սենյականոց բնակարան հաղորդի կենտրոնում կամ մետրոյի «Բաղրամյան» կամ «Բարեկամություն» կայարանների մոտակայքում, մեկ միլիոն դրամի սահմաններում: Զանգահարել՝ 582483

Եղանակը Հայաստանում

ՀԱՅԱՍՏԱՆ

Գյուրզաներ Պտղնիի ամառանոցներում

Զանգահարեցին շտաբօգնության թիվ 2 հիվանդանոցի վերակենդանացման բաժնի վարիչին (հավանաբար ՆԳ բաժնի աշխատակից) եւ հայտնեցին, որ Պտղնիի ամառանոցներում կան գյուրզա օձեր եւ պատրաստ դիտի լինել այդ բնույթի հիվանդներ ընդունելու համար: Սակայն դարձվեց, որ գյուրզայի դեմ հակաթույն չկա հիվանդանոցում եւ դեղատանը ու դա այնքան էլ հետաքրքրող դեղ չէ: Վերջին անգամ գյուրզայի «հետեւանքներին» առիթ է եղել հանդիպել երեք տարի առաջ կենդանաբանական այգու ձորում, եւ բուժումը տեւել է 1,5 ամիս:

ՀՄՄԱՌՈՏ

Անարգվել է ռուսական գերեզմանատունը

ԲՈՆՆ, 10 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Անհայտ անձինք անարգել են ռուս զինվորների գերեզմանատունը գերմանական Ֆորստ ավանում, որ գտնվում է Լեհաստանի հետ սահմանից ոչ հեռու: Վերջերս այդ գերեզմանատունը հանդիսավորությամբ հանձնվել էր հաղթական իշխանությունների ենթակայությանը՝ երկրամասը լքող ռուսական զորքերի կողմից: «Գերմանական ազիի» վկայությամբ, ավելի քան 50 շիրմաքար պատվել են նացիստական խորհրդանիշերով: Հանցագործների մասին իրավապահ մարմիններն առայժմ տեղեկություններ չունեն:

Մեգուրը խուսափո՞ւմ է

ՏՐԻԱՍՊՈԼ, 10 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մերձդնեստրի ղեկավարները Մոլդովայի ղեկավարությանը մեղադրել են Մերձդնեստրյան հիմնախնդրի կարգավորման բանակցությունները ձգձգելու խնդրի մեջ: Ինչպես ասվում է Մերձդնեստրի նախագահի եւ կառավարության մամլո ծառայության Տիրասպոլում տարածված հայտարարության մեջ, «Ռուսաստանի միջնորդությամբ սկսված բանակցությունների գործընթացն աշխուժացնելու Տիրասպոլի փորձերը հերթական անգամ բախվում են Մոլդովայի կողմից լուսյայն շրջափակմանը, իսկ նախագահ Միրչա Սնեգուրը փաստորեն խուսափում է բանակցություններից»:

Սպառնում են տոտալ պատերազմով

ՍԵՈՒԼ, 10 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Հարավային Կորեայի պաշտպանության նախարարը հունիսի 9-ին հայտարարել է, որ եթե Հյուսիսային Կորեան շարունակի արգելել փորձագետների մուտքն այս երկիր, ապա Հարավային Կորեան եւ ԱՄՆ-ն ստիպված կլինեն դիմել տոտալ պատերազմի: Իր հայտարարությունը նա հիմնավորել է նաեւ նրանով, որ Հյուսիսային Կորեայի զորքերը բերվել են թիվ մեկ ռազմական պատրաստականության:

NAVAI AIRCORPORATION

ԵՐԵՎԱՆ-ԲՈՒԽԱՐԵՍՏ-ԵՐԵՎԱՆ

Ուղիղ ավիաչվերթ (առանց ՄԻՏԱՆԿՅԱԼ վայրէջքի)

✔ Շահավետ տուրիստական ուղեւորություն
✔ Անհրաժեշտ փաստաթղթերի շտապ ձեւակերպում
✔ Անհամեմատ ցածր գներ
✔ Ուղեւորությունը՝ հունիսի 19-ից 23-ը Բուխարեստում, ինքնաթիռի կանգառով

Ամեն ուրբաթ ուղիղ ավիաչվերթ
ԵՐԵՎԱՆ-ՕՄՍԿ

Ամեն հինգշաբթի ուղիղ ավիաչվերթ
ԵՐԵՎԱՆ-ՊԵՆԶԱ

«Սեւան» հյուրանոց, 119,120 սենյակ:
Հեռ. 56.49.78. 58.26.53, 58.13.84

A STYLE

«Գարեգեան» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Գին՝ 69149. Տպաքանակ 15 000. Պատվեր 1779. Ստորագրված է տպագրության՝ 10. 06. 1994 Գինը՝ 5 դրամ

digitised by A.R.A.R.@